

494/47. 925)

9-14

ՅԱՎ. Հ. Ա. ԶԵՂԱՔ ԽԱՆ

# ԾԻԱԾԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Բ. ԳԻՐՔ

ՔԵՐԱԿԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր բարգմանած, նկատողութեամբ պատրաստ եւ ինքնուրոյն  
հատուածներու արտասպուրեան իրաւումիլ վկասպահուած է :

Կ. ՊԱԼԵՎ

ԳՐԱՏՎՈՒՅ, Պ. ՊԱԼԵՎՅԱ

1949

ՏԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՆԻՆ  
Օ. ԱՐՁՈՒՄՅԱՆ  
№ 265



## ԾԻԱԾԱՆ

Բ. ԳԻՐՔ

### 1.—ԻՄ ԳԻՐՔՈՒ

Բաէ, Աային,  
Իմ սիրում զիրք,  
Ծոցդ աս ո՞րիան  
Լաւ բաներ կան:

Հո՞ն է մուկը,      Ծաղիկ ու ծառ,  
Ոսկի ձուկը,      Ծիսան ու ծիծառ  
Խարուն կատուն,      Հաւան ու ալոր,  
Շնիկն արքուն      Խճճոր, սալոր,  
Գառնուկ, կով, եղ,      Նաշխուն բիթեռ  
Պէսպէս բգեզ:      Ու շատ բան դեռ....:

Էսէ՛, պատմէ՛,  
Թէ կը համիս,  
Աղուոր բաներ  
Իմ ականջիս:  
  
Դէ՞ս, շնո՞ւ պատմէ՛.  
Խմ խելօ՞վ զիրք,  
Մասո՞ղ ժեզի.  
Խաղ, պար ու միրզ:

---



## 2.—ՕՐՈՒԵԱՆ ՊԱՀԵՐՆ ՈՒ ԺԱՄԵՐԸ


---

Մենք առառուն կ'արթննանք, կ'ելլենք  
անկողինէն, կը հագութնանք ու նախաճաշ  
կ'ընենք:  
Կէսօրին կը ճաշենք:  
Իրիկուան ընթրիք կ'ընենք:

Կէս գիշերին արդէն պառկած, քնացած  
կ'ըլլանք:  
Յորեկը աշխատութեան պահն է. զիշերը՝ հանգիստի:  
Յորեկն ու գիշերը կը կազմեն մէկ օր.  
Օրը քսան և չորս ժամ է:

—Ի՞նչ բան ցոյց կուտայ օրուան ժամերը և ի՞նչպէս:

---



## 3.—Ա. Ք Ա. Ղ Ա. Ղ

Լաէ ինձի, աքաղաղ,  
Ոսկի կատարիդ մատաղ,  
Կարմիր մօրոքիդ մատաղ.

Ինչո՞ւ կանուխ կ'արթննաս ,  
Բարձըր ձայնով կը պոռաս ,  
Բակին դուռը կը թառիս :

ՀԱՆԵԼՈՒԿ 1.—Բան մը ունիմ, բան չէ ,  
Երկինքն ի վեր կը կանչէ :

---

## ՇՆՈՐՀԻԿՆ ՈՒ ՇՆԻԿԸ

---

Շնորհիկը պարտէզը նստած՝ դասը կը  
սերտէր։ Շնիկն ալ քիչ մը անդին երկնցեր  
էր գետնին վրայ։

Շնորհիկ մէկէն գիրքը երկնցուց շնիկին  
ու ըստւ։

—կարդա տեսնեմ, սիրուն շնիկս, ի՞նչ  
գրուած է զրքիս մէջ։

Շնիկը ելաւ, մօտեցաւ զրքին, հոտո-  
տեց քանի մը անզամ ու հեռացաւ։

—Ի՞նչ կ'ընէ շունը, ի՞նչ է անոր գործը։

---



## 5. — ՓՈՔՐԻԿ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

---

Տղայ մըն եմ դեռ շատ պղտիկ,  
Բայց տունը չեմ րմէր տիտիկ .  
Արեւն առուն ցարելուն պէս՝  
Կերպամ շուտով մանկապարտէզ։

Հոն կը գրեմ ու կը կարդամ,  
Նաեւ կ'երգիւմ ու կը խաղամ .  
Կը սորվիմ շատ բաներ աղուոր  
եւ զիտեմ զոց ոտանաւոր։

Տղայ մըն եմ դեռ շատ պղտիկ,  
Բայց տունը չեմ րմէր տիտիկ :

---

## 6. — ԶԲԱՂԱԾ ՄԱՆՈՒԿՆԵՐ

---

Հայրիկը տուն եկաւ ու վնտուեց եր-  
ուանդն ու Արամը։ Բսին թէ պարտէզն են։


—Երուանդ, ի՞նչ կ'ընես հոդ. ձայնեց  
հայրիկը:

—Ոչինչ պատասխան տուաւ Երուանդ:  
—Դժուն ինչ կ'ընես, Արամ, պոռաց նո-  
րէն հայրիկը:

—Երուանդին կ'օգնեմ, ձայն տուաւ  
Արամ:

Ի՞նչ կ'ընէին Երուանդ ու Արամ:

---



### 7.—ՄԱՆԿԻԿԸ ԹՌՉՆԻԿԻՆ

---

Դուն թըռիք, թռչնակ, ամէն առաւօտ  
Պատուհանիս մօտ.

Գեղգեղէ քիչ մը զարթումէս առաջ  
Զայնով սիրաւաչ:

Թո՞ւ քու ճիւճիւէդ աչքերըս բանամ,  
Նախ դէմքըս լըւամ,  
Ետքը՝ քեղի պէս երգովս առաջին  
Փառք տամ Արարչին.

---

### 8.—ԾՈՅԼ ԽՈՐԷՆԸ

---

Խորէն պարապ կ'անցընէր ժամանակը  
ու ընաւ չէր սերտեր դասը:

—Խորէն, դասդ սերտէ, ըսաւ մայրիկը:  
—Գլուխս կը ցաւի կոր, ըսաւ Խորէն  
յօրանշելով, և տեղէն չերերաց:

Բոսէ մը վերջ՝ մայրիկն ըսաւ.

—Խորէն եկնւր, հաց կեր:

—Խնձոր ալ կուտամս, մալրիկ, ըսաւ  
Խորէն, ուրախութեամք վազելով դէպի  
մօրը:

---

## 9.—ԾՈՅԼ ԱՂՋՆԱԿԲ

---

Գիրքն ի՞նչ ընեմ, կը պատոի,  
Գրդիշն ալ շուս կը կոտրի,  
Տիկնիկ ըստար՝ խաղայի,  
Խաղին ըստար՝ աղայի  
Հագուէի, շնուէի,  
Փողոց, փողոց պստէի:  
Ռւտէի, խմէի.  
Մբևէր՝ թնի:

ԱՌԱԽ. — Զենք բան, ոսք զերեզման:

---



## 10.—ՆԱՇԽՈՒՆ ԹԻԹԵՌՆԻԿԲ

---

Զապէլ պարտէզին մէջ նաշխուն թի-  
թեռնիկ մը տեսաւ վարդին վրայ թառած:  
Զապէլ կամացուկ մը մօտեցաւ թիթեռ-  
նիկին:

Անոր թեւերը ծիրանի գօտիի գոյներն  
ունէին. վրան ցանուած էր ոսկեփոշի:  
Զապէլ հիացաւ մնաց և թիթեռնիկին  
շդպաւ:

— Դուք ինչ կ'ընէիք, արաք. եթէ թիթեռնիկին  
դպիք, ինչ կ'ըլլայ:

---

## 11.—ԲԱՐԻ ԱՆԱՀԻՏԸ

---

Անահիտ բարի աղջիկ մըն էր, փողոց-  
ները չէր պտրտեր, չար տըզոց հետ չէր  
խաղար: Ուշադրութեամբ իր դասերուն  
կ'աշխատէր:

Անահիտ շատ անգամ իրմէ պղտիկ Մե-  
րուժան եղբայրը կը պտտցնէր պարտէզին  
մէջ. միշտ կը հսկէր որ վտանգ մը չպատա-  
հի մանկիկին:

Իր այս ընթացքովը՝ Անահիտ սիրելի  
եղաւ ամէնուն:

---

### 12.—ԳՈՅՑՆԵՐԸ

Ճերմակ է ալիւրն ու ձիւնը ,  
Սեւ է ածուխն ու մելանը ,  
Ասկին է վայլուն , գեղնորակ ,  
Խարմիք է գոգնոցս ու կըրակ .  
Կանանչ է խոտը երբ թաց է ,  
Կապոյտ է երկինքն երբ բաց է .  
Խոկ մանիշակը . . . ո՞հ , մոռցայ ,  
Ան ալ օրիորդս թո՞ղ ըսէ :

—Ի՞նչ զոյն ունի մանիչակը . խոկ նարի՞նջը , մո-  
խի՞րը , վա՞րդը :

### 13.—ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐԵՐԸ

Շաբաթ օր մըն էր : Տիրան ուրախ , ու-  
րախ տունին մէջ վեր վար կը ցատքրտէր  
ու կ'ըսէր :

Սիրական շաբաթ ,  
Հոգիս կիրակի ,  
Հոգէառ երկուշաբթի :

Մայրիկը լսեց ու ըսաւ :

—Տղաս , ծոյլ տղոց խօսքեր են ատոնք :  
Շաբթուան բոլոր օրերն ալ սիրելի են : Գի-  
տես շաբաթը քանի՞ օր է :

—Եօթը օր է , ըսաւ Տիրան :

—Իրաւ է : Գիտցիր նաեւ թէ երկու-  
շաբթի , երեքշաբթի , չորեքշաբթի , հինգ-  
շաբթի , ուրբաթ , շաբաթ օրերը դպրոցի ,  
աշխատութեան օրեր են . կիրակին հան-  
գիստի , զրուանքի օր է : Ո՞վ որ չաշխատիր ,  
հանգիստ ընելու ալ իրաւունք չունի :

ԱՌԱԾ.՝ Ծոյլին ամեն օր կիրակի է :

ՀԱՆԵԼՈՒԿ 2.—Եօրեն աղբար են , տարինցին մեկ  
է . անուննին զատ զատ :



### 14.—ԱՐՓԻԿԻՆ ՊՈՒՊՐԻԿԸ

Իմ պուպրիկը ծրանդասէր .  
Ունի մազեր շէկ . սիրուն ,

Մինչեւ մեջիք երկար [վարսեր՝  
Խոպոպաներով ողորուն :


Ճերմակ, փայլուն ճակատին տակ,  
Այուկներն են խաժուժիկ .  
Վարդ բերանն այ կես բաց, կես փակ .  
Ի՞՛ ժըպտի միշտ գեղեցիկ :  
  
Երիզներով կարմիր, լայն, լայն,  
Լարեր ունի զարդարուն .  
Գիտէ՞ր, ինձի ո՞վ սրաւու զայն . . .  
— Իմ մայրիկը սիրատուն :

---

15.—ՀԱՐՑՈՒԻՄ ՄԸ

Վահան հարցուց Աղաւնիին .  
— Աղաւնի, ձուկը մուկը մէկ տապակ,  
Որը կ'ուտես :  
— Ձուկը կ'ուտեմ, պատասխանեց Ա-  
ղաւնի :  
— Ձուկին եղը մուկին կ'երթալ, մուկին  
եղը ձուկին կ'երթայ, ըստ Վահան ծիծա-  
ղելով :

---



16.—ԶԻԱԿ, ԶԻԱԿ

Զիակ, ձիակ, զիս վազցուր,  
Տա՛ր պարոնին գուռոն անցուր .  
Պարոնը փայտ է տաշեր,  
Խաթունն հաւկիթ է խաշեր,  
Ինձ ալ բաժին է պահեր,  
Ոսկի սնտուկն է գրբեր,  
Ոսկի կատուն է կերեր :  
Վայ աս կատուն ծեծեցէք,  
Վայ, աս կատուն մի ծեծէք,  
Ոսկի թելով կախեցէք .

---

17.—ԱԿՆՈՑ ԸԸ

Փոքրիկ գեղամ մամիկին քով վաղեց  
ու ըստ .  
— Մեծ մայր, ակնոցդ քիչ մը ինձի  
կուտան :

— ի՞նչ պիտի ընես, զաւակս, ըսաւ  
մեծ մայրը,

— Դուն կ'ըսես թէ ակնոցով լաւ կը<sup>1</sup>  
տեսնես. տուր ակնոցդ, աչքիս գնեմ ու  
նայիմ թէ մաման ուր է դրեր շագանակը:

— Որո՞նք կը գործածեն ակնոց. ի՞նչ կ'ընեն ակնոցով:



18. — Ո՞վ, Ո՞վ . . .

Գիշերները երբ յինանամ,  
Ո՞վ կը հնկէ վյրաս անուն,  
Ո՞վ կը ժայშի երբ կ'արթնամ . . . :

Ո՞վ իմ վյրաս կու սայ հոգի.

Ամէն հոգ, ցաւ ու նեղութիւն  
Խնձի համար ո՞վ կը տանի . . . :

Դպրոցէն ալ երբ տուն դառնամ,  
Ո՞վ ինձ կու սայ ափով լեցուն  
Չամիչ, կաղին, նուշ յաղցրահամ . . . :

— Ո՞վ կ'ընէ այս բաները ձեզի համար, ան դեռ  
ուրիշ ինչո՞ր կ'ընէ:

Հայոց 2988

### 19.—ԽԵԼՕՔ ԳԼՈՒԽԸ

Բերանն ըսաւ. — Ես ամէն ինչ կ'ուտեմ,  
կը խմեմ.

Զերքն ըսաւ. — Ես ամէն ինչ կը շինեմ,  
կը քանդեմ.

Լեզուն ըսաւ. — Ես ամէն բան կ'ըսեմ,  
կը պատմեմ:

Ոտքն ըսաւ. — Ես ամէն տեղ կ'երթամ,  
ման կուգամ:

Գլուխը մտիկ ըրաւ բերանին ու ձեռա-  
քին, լեզուին ու ոտքին ըսածները, և ծի-  
ծաղեցաւ:

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը  
միասին ըսին զլուխին. — Ինչու կլծիծաղիս:

Գլուխն ըսաւ .— ի՞նչ որ ընէք , առաջ  
ինծի պիտի հարցնէք , առանց ինծի բան մը  
չէք կրնար ընել :

Բերանը բաց մնաց . իսկ լեզուն կմլը-  
մալով ըսաւ .

— չա , իրաւ է , իրաւունք ունի գլուխը :

20. — Հ Ա Յ Ո Ւ Խ Ա Հ

Շատ կը սիրեմ իմ հայրիկ .  
Ամէն ատեն ինք ինծի  
Կ'ընէ շատ , շատ , շատ բարիք .  
Ի՞նչպէս պատմեմ ես ձեզի :

Ո. մառ կ'ըլլայ թէ ձրմեռ  
Ան կ'աշխատի օրն ի ըուն ,  
Հանդշիլն ի՞նչ է , չի գիտեր ,  
Չունի նաև երկար քուն :

Դեռ արեւը չցալթած՝  
Կ'եղէ , կ'երթայ իր գործին ,  
Տուն կը դառնայ երբ արդէն  
Մութը կոխեր է գետին :

— Հայրիկը գեռ ուրիշ ինչն կ'ընէ ձեզի :  
ԱՌԱՋ . — Հօր տնակ , անուշ ֆնակ :



21. — Գ Ր Ի Գ Ո Ր Ի Կ Ն Ո Ւ Կ Ո Վ Ե Ր Ը

Գրիգորիկ առաջին անգամ գիւղ ելած  
էր : Գիւղին քովէն գետակ մը կը հոսէր :  
Գրիգորիկ գետակին եղերը կը խաղար ,  
Երբ անդիէն կովեր եկան ջուր խմելու :  
Գրիգորիկ տեսաւ որ կովերը ջուրը կը  
մտնեն : Անմիջապէս տուն վազեց :  
— Մայրիկ , մայրիկ , պոռաց Գրիգորիկ ,  
կովերը պիտի թրջեն իրենց ոտքերը :

## 22.—ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒ ՄԱՆԿԻԿԸ

---

—Ե՞ւ, սիրուն մանկիկ,  
Ե՞ւ, իբրեւ քոչնիկ,  
Թափ տանիք թեւերու  
Բարձրանանի երկիմն  
Ուր ամեն եակ  
Կը պատսպարուի  
Տիրոց թեւին տակ :

—Ո՞յ, ո՞վ հըրեշտակ,  
Ես ունիմ մայրիկ  
Որ ինձ ամեն օր  
Կու տայ շատ պաշիկ  
Երկիմքը մայր կայ  
Որ ամեն օր տայ  
Ինձ այնչափ պաշիկ :

---

## 23. —ԱՐԶԱԳԱԳԱԳԼ

---

Աքլորը կոռուն ելաւ, թափ տուաւ  
Թեւերուն և կանչեց. կուկուլիկն . . .  
Ժայռը անդիէն արձագանդ տուաւ ու  
կրկնեց. կուկուլիկն . . .

Աքլորը բարկացաւ :

—Տեսնեմ նվ է եղեր սա զիս ծաղրող  
անպիտանը, պոռաց և գնաց ժայռին մօս:  
Վեր թռաւ, ուժգին կերպով զարնուեցաւ  
ժայռին ու ինկաւ գետին.

Աքլորն աւելի բարկացաւ, նորէն նորէն  
վեր թռաւ, նորէն նորէն զարնուեցաւ  
ժայռին ու վար ինկաւ, մինչեւ որ արիւն-  
լուայ գետին փռուեցաւ :

—Արձագանգի հանդիպած էք. ի՞նչ կ'ընէ արձա-  
գանգը :

---



## 24. —ՕՐՈՐԵՐԳ

---

Օրօր, օրօր, աղուո՞ր խուշիկ,  
Քընացի՞ր մըշիկ, մըշիկ :

Լեռներ, ձորեր ձիւն է եկեր .  
Իմ զառնուկիս քունն է եկեր .  
Օրօր, օրօր, աննըման,  
Մայր մը չէ բերեր նըման .  
Խոշոր, ճերմակ լուսինկան  
Յաթեր է օրբանիդ վըրան :

---



25.—ՃՆՃՂՈՒԿԻՆ ԲՈՅՆԸ

Պարտէզը, ճիւղերու մէջտեղ, փոքրիկ  
Ճնճղուկը բոյն մը շինեց : Այդ բոյնին մէջ  
ածեց մանրիկ հաւկիթներ :

Ճնճղուկը երկար ատեն նստաւ հաւ-  
կիթներուն վրայ : Վերջապէս օր մը երկու  
ծիտիկներ դուրս ելան անոնցմէ :

Ճնճղուկը ուրախ էր . կը ճռուողէր ու  
կը դառնար բոյնին շուրջ : Ծիտիկները շար-

ժեցան, գլուխնին երերցուցին և ըսին  
Ճնճղուկին .

—Ծիկ, ծիկ, ծիկ,  
Մննւշ մայրիկ,  
Մեզ կը սիրե՞ս,  
Բեր մեզի կուտիկ :

ԱՌԱԾ.—Ճնճղուկն վախցողը կորեկ յի ցաներ:

---

26. — Մ Ա Յ Ր Ի Կ Ը

Փոքրիկ կորիւն փողոցը կորսնցուց մայ-  
րը : Կորիւն սկսաւ լալ, կանչել՝ «մայրիկ,  
մայրիկ» ըսելով, բայց մայրիկը չկար : Ան-  
ցորդներ հաւաքուեցան կորիւնին գլուխը և  
հարցուցին թէ նվ է իր մայրը :

—Միթէ չէք զիտե՛ր, իմ մայրիկս է ան-  
—Ի՞նչ է անունը, հարցուցին անցորդ-  
ները :

—Մայրիկ է անոր անունը, պատաս-  
խանեց կորիւն և կը շարունակէր լալ :

—Բաէք, մարդիկ ի՞նչով կը ճանցուին և իրարմէ  
կը զատուին :

---

27. — ԱՆ ՈՒՆՆԵՐ

Ես զիտեմ շատ անուններ .  
Անուններ կարա ու երկայն .  
Միրուն աղուոր անուններ  
Մանչերու կամ աղջրկան :  
Մտիկ ըրեմ որ լսեմ .  
Խորհն, Սուրեն, Փառանձնեմ,  
Օննիկ, Գառնիկ, Շամիրամ,  
Միսակ, Գիսակ, Պերճ, Վահրամ,  
Աբել, Զապել, Նազենիկ,  
Եղուարդ, Նըւարդ, Սարենիկ,  
Պետրոս, Պողոս, Արուսեակ,  
Արամ, Գեղամ, Հրմայեակ,  
Զաւէն, Արմէն, Մրբուհի,  
Յակոբ, Մեւրոս, Տիրուհի,  
Մաննիկ, Նունիկ, Վարդանյշ,  
Երուանդ, Հրարան, Ոիրանյշ,  
Արշակ, Յովակ, Արմինէ .  
Լեւոն, Երմոն, Հերմինէ,  
Տիգրան, Միհրան, Հայկ, Գամեն,  
Դեռ զիտեմ շատ անուններ,  
Անուններ կարա կամ երկայն .  
Մանչերու կամ աղջրկան :

— Դատէ՞ք ուրիշ անուններ ալ և գլուցէ՞ք :

28. — ՓՈՔՐԻԿ ՍՈՒՐԵՆԸ

Երանիկ և Լուսիկ կը խաղային պար-  
տէզին մէջ : Փոքրիկ Սուրենն ալ անոնց հետ  
միասին կը խաղաք :

Մայրիկը երեւցաւ խոհանոցին դուռնէն  
և լսաւ :

— Ո՞վ ինծի երեք հաւկիթ պիտի բերէ  
նպարափաճառէն :

— Ես կը բերեմ, լսաւ Սուրեն, և վա-  
զելով գնաց, շուտ մը բերաւ հաւկիթները :

Թիշ վերջ մայրիկը նորէն երեւցաւ և  
լսաւ .

— Զեզմէ մէկը թնդ քովս գայ :

— Ես շատ գործ ունիմ, լսաւ Երանիկ,  
Հուզելով թողուլ խաղը :

— Ես ալ, լսաւ Լուսիկ .

— Դուն եկուր, Սուրեն, լսաւ մայրի-  
կը, ձեռքին մէջ բոնած անուշ բլիթ մը :

Սուրեն վազեց գնաց մայրիկին քով :

— Այդ աղջիկները շատ գործ ունին,  
աւելցուց մայրիկը, չեն կրնար այս անուշ  
բլիթն ուտել . ես զայն փոքրիկ Սուրենիս  
կուտամ որ շատ գործ շունի և կրնայ մայ-  
րիկին օգնել :



**29.—ՓԻՍԻԿ, ՓԻՍԻԿ**

Փիսիկ, գիսիկ,  
Խաթօնուն հարսիկ,

Թաթիկիներով,

Ճանկիներով,

Գետին նոտած,

Բնչ, կը կարդաս,  
Մըն, ճըն, մըն, ճըն . . .

**30.—ԳԼԸ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ**


Զարեհ պղտիկ տղայ ճըն էլ, Շատ  
աղոց պէս ան ալ մատներով քիթւ կը  
խառնէլ հակառակ մայրիկին խրառնելուն,

Օր մը Զարեհ նոր  
հողած էլ, Այնչափ  
Բոյց չէր մոռցած դար  
վորս թիհնը . մատներ  
խառնէր, Ահա յանկանը  
ժամին բացած վէրքեր  
մակ, աղուոր զգաստը  
ճիցաւ,

Զարեհ շատ լացաւ  
նոր, Նոր հագուստին լ  
Ասիկա այնշափ ցա  
որ մէջ մըն ալ մատը ք

**31.—ՄԱՐՄԵԼ**

Եարևի շատ լացաւ  
Ասիկա այնշափ ցա  
որ մէջ մըն ալ մատը ք



**29.—ՓիՍիկ, ՓիՍիկ**

Փիսիկ, Փիսիկ,  
Խալթուն հարսիկ ,  
Թաթիկներով ,  
Ճանկիկներով  
Դետին նստած  
Ի՞նչ կը կարդաս ,  
Ա՞ռ , մ՞ռ , մ՞ռ , մ՞ռ . . . .

**30.—ԳԵՇ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ**

Զարեհ պղտիկ տղայ մըն էր : Շատ  
տղոց պէս ան ալ մատներովը քիթը կը<sup>1</sup>  
խառնէր հակառակ մայրիկին խրատներուն :

Օր մը Զարեհ նոր ճերմակ հագուստ մը  
հագած էր : Այնչափ ուրախ էր որ . . . .  
Բայց չէր մոռցած դարձեալ իր աղտոտ սո-  
վորութիւնը . մատներովը միշտ քիթը կը<sup>1</sup>  
խառնէր : Ահա յանկարծ քիթը արիւնեցաւ  
մատին բացած վէրքերէն և Զարեհի ճեր-  
մակ , աղուոր զգեստը աղտոտեցաւ , լղբ-  
ճեցաւ :

Զարեհ շատ լացաւ , բայց օգուտ չու-  
նէր : Նոր հագուստին խերն անիծուած էր :

Ասիկա այնչափ ցաւ ոլատճառեց իրեն  
որ մէյ մըն ալ մատը քիթը շխօթեց :

**31.—ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ**

Ես կ'երթամ մանկապարտէզ ,  
Հոմ կը սորվիմ բաներ պեսպէս:  
Սա մարմինիս փափուկ , փորիկ .  
Բանման ձեզի մասերն զողսրիկ .  
Ահա՝ վերը զյսիկս աղուոր ,  
Վարն ալ ոմերըն ձեւաւոր .  
Հո՞ս է ձակասն ողորկ , փայլում ,  
Հո՞ս՝ ալուկներս պայլում .  
Այս է յրիկըս պայլիկ ,

Տակն ալ բերանըս կղորիկ .  
 Ոհա՛ թուշերս՝ կարմիր խնձոր ,  
 Ու շրուննիլս՝ նղոան կտոր .  
 Սա՛ է կզակըս բումպուլիկ ,  
 Տակն ալ վիզըս՝ ժիշ մը հասլիկ .  
 Տիսէֆ ունիմ զոյզ ականջներ  
 Որ կը լրսեն ամեն ձայներ .  
 Նաեւ երկու ձեռքեր բամպակ ,  
 Մէկն աջ ձեռսն է, միւսն ալ է ձախ .  
 Երէ ուզեմ՝ վեր կը վերցնեմ  
 Այսպէս՝ ծափ, ծափ ծափ կը զարնեմ:  
 Ես երբալով մանկապարտէզ  
 Կը սորվիմ շատ բաներ այսպէս :  
 — Ըսէ՛ք դեռ մարմիկ ուրիշ բնչ մասեր գիտէք :

ՀԱՆԵԼՈՒԿ 3.—Մէկը կանգնած կը խօսի,  
 Երկուքն ականջ կը դնեն,  
 Խոկ երկուքն ալ կը նային:

---



### 32. — ՎԵՐԷՆ ՈՒ ՎԱՐԷՆ


Աղուէսն օր մը բարձր աշտարակին գըլուխն ելաւ և զարմանքով տեսաւ թէ վար՝ ամբողջ քաղաքը իր ոտքերուն տակ տարածուած է . խկ գետնի վրայ մարդիկը մրջիւնի պէս կ'երեւնան : Աղուէսը ինքիրեն ըսաւ .

— Իրաւ որ ես յիմար եմ եղեր . հիմա հասկցայ թէ մարդիկ ինչ պղտիկ, ինչ խեղճուկ են եղեր . ես ալ այնքան կը վախնայի անոնցմէ :

Այդ պահուն հեռուն պղտիկ մանուկներ կանգնած՝ կը խաղային, երբոր յանկարծ աշտարակին գլուխը բան մը տեսնելով՝ ուզեցին գիտնալ թէ ինչ է, և իրարու

հետ բաւական վիճելէ վերջ՝ վճիռ տուխն  
թէ ճանձ է . . . :

—Ո՞ր կարծիքը ճշմարիտ է, աղուէսի՞նը թէ մա-  
նուկներունը :



### 33. — Ա. Ր Տ Ո Ւ Խ Ի Կ

Արտուտիկ,  
Նախշուն տոտիկ,  
Իջնեն կալեր  
Գողտիկ մողտիկ .  
Հընտրեն քարեր,

Ուտեն կուտիկ .  
Կը ծլուըլան  
Կլթիկ, կլթիկ :

—Կը ճանչնա՞ք արաոյաը, դեռ ուրիշ ի՞նչ թռչուն-  
ներ գիտէք . Ըսէ՞ք :

### 34. — ԿՈՌՈՒԼՏՈՂ ՔՈՅՑՐԵՐ

Աննա և Սիրարփի գեղեցիկ պուպրիկ  
մը ունէին վարդագոյն հագուստով, զոր ի-  
րենց թեւերուն վրայ կը պտտցընէին կար-  
գաւ :

Օր մը Աննա ուզեց որ պուպրիկին հետ  
միայն ինք խաղայ : Սիրարփի ալ ուզեց որ  
քիչ մըն ալ իրեն տայ պուպրիկը : Աննա  
շտուաւ : Երկու քոյրերը բարկացան իրարու  
դէմ :



Սիրարփի խլեց պուպրիկին ոտքերէն .  
Աննա պինդ բռնեց գլուխը, և սկսան իրա-  
րու ձեռքէ քաշել խեղճ պուպրիկը :

Շատ չտեւեց, պուպրիկը երկու կտոր  
եղաւ, և երկու քոյրերը ինկան իրենց կըռ-  
նակին վրայ: Աննային ձեռքը մնաց պուպ-  
րիկին գլուխը և Միրարփիին ձեռքն ալ՝  
ոտքերը:

Շատ աշխատեցան որ պուպրիկին կը-  
տորները իրար բերեն և նորէն առջի վիճա-  
կին վերածեն, բայց կարելի չեղաւ: Այն  
ատեն շատ զզջացին որ կոուրտեր են, և  
սկսան լալ պուպրիկին կտորներուն առջեւ:

35. — Ս Ա Գ Ի Կ

Սա՛զիկ, սա՛զիկ, իմ սիրունիկ,  
Քեզի կուտամ անուշ կուտիկ.  
Որ դուն ուտես, շուտ մը մեծնաս,  
Ուրախ ապրիս, զուարձանաս :

Երբոր մեծնաս, մեծ սագ դառնաս,  
Ես կը խնդրեմ իմ մայրիկես,  
Որ ամ ժողվէ յու փետուրիկ,  
Ինձի նամար շինէ բարձիկ:

Սա՛զիկ, սա՛զիկ, իմ սիրունիկ  
Ես ժեղ կուտամ անուշ կուտիկ :

36.—ՆՈՐԱԾԻՆ ՊԵՏԻԿԸ

Մամիկն ամէն օր տաքուկ ջուրի մէջ կը<sup>1</sup>  
լոգցնէ նորածին փափուկ Պետիկ թոռնիկը:  
Պետիկ կուլայ, կը ճչէ, ինքիրմէ մեծ ճայ-  
ներ կը հանէ. մամիկը հոգ չըներ :

Երբոր լոգանքը կը վերջացնէ, մամիկը  
կը հանէ ջուրէն Պետիկը, և նախ կզակէն,  
յետոյ՝ ոտքերէն բռնելով կը կախէ, կը  
թոթուէ մարմինը ու կ'ըսէ.

Երկան վզիկ,  
Թոթուէ ջրիկ,  
Ժողվէ մսիկ :

Կամար ընքուի լինիս,  
Երկան թարթիչ լինիս,  
Շահէն աշուի լինիս,  
Նուշիկ քթիկ լինիս,  
Պատիկ բերան լինիս :

Պետիկ կամաց կամաց պիտի մեծնայ  
ու գեղեցիկ մանչ մը պիտի ըլլայ, մեծ մօրն  
ուզածին պէս :

— Մամիկն բնչպէս կ'ուզէր որ ըլլար թոռնիկը.

### 37.—ԱՍՏՂԻԿԻՆ ԵՐԱԶԸ

Փոքրիկ Աստղիկ գիշերը երազ էր տեսեր : Առառուն արթնցաւ և սկսաւ պատմել մայրիկին :

—Մայրիկ, վերի սենեակին պատուհանէն կը նայէի, հեռուն քեզ տեսայ որ հօրեղօրս պարտէզին մէջ կը պտտէիր. մայրիկ, մայրիկ, պոռացի, և սկսայ թռչիլ օդին մէջ. ի՞նչ աղուոր է թռչիլը . . . թռայ . . . թռայ . . . քովդ հասայ . ինծի նայէ, մայր, ըսի ու . . . :

Եւ Աստղիկ սկսաւ մտմտալ :

—Յետոյ ի՞նչ պատահեցաւ, ըսաւ մայրիկը :

—Ի՞նչ գիտնամ, միտքս չէ, դուն ըսէ, մայրիկ, վերջը ի՞նչ եղաւ :

—Ես ի՞նչպէս գիտնամ քու երազդ :

—Բայց չէ՞ որ դուն ալ այնտեղ էիր, մայրիկ . . . :

—Դուք ալ երազ կը տեսնէ՞ք, ի՞նչ երազներ :

### 38.—ՊԱՌԱՒԻԻՆ ՀԱԻԸ

Պառաւին հաւը ամէն օր մէյմէկ հաւկիթ կ'ածէր : Պառաւը ագահ էր, մտածեց և ինքիրեն ըսաւ :

—Եթէ հաւուս շատ կուտ տամ, պէտք է որ օրը մէկ հաւկիթէն աւելի ածէ :

Եւ սկսաւ հաւուն շատ կեր տալ :

Հաւը կերաւ, կերաւ, գիրացաւ ու ածէ կտրեցաւ :

ԱՌԱԾ. — Ածան հաւը կրկուան կ'ըլլայ:

ՀԱՆԵԼՈՒԿ 4. — Տնակ մը կայ, դուռ չունի, Վրան արծար, մէջն ոսկի:



### 39. — Ո Ի Լ Ի Կ Ն Ե Ր

Իմ ուլիկներ, փոքր այծուկներ,  
Դէհ, շարժեցէք, բացէք դուռներ.

Ահա՝ կուգամ՝ կանանչ դաշտէն  
Անուշ խոտերն արածելէն,  
Զուրն եմ խմեր պաղ ազրիւրի,  
Ծիծերս առատ կաթով են լի.  
Զեղի կ'ըսեմ, բացէք, բացէք,  
Ու ծիծերուս կաթը ծըծէք.

---

40.—ԹԱՓԹՓԱԾ ՅԱԿՈԲԸ

---

Յակոբ ծոյլ տղայ չէր, բայց կարգ կանոն չէր գիտեր: Իրիկուան, զասերը լմացը-նելէ յետոյ, գիրքերն ու տետրակները ասդին անդին ցրուած կը թողուր: Առտուն ալ անկողնէն ելլելուն պէս, հագուստները կ'սկսէր փնտուել: Գուլպասյին մէկը աթոռին վրայ էր, միւսը՝ աթոռին տակ, կօշիկին մէկը անկողնին ներքեւ էր, միւսը սանդուղին վրայ:

Յակոբ այսպէս ամէն առտու ուշ կը մնար հագուելու ու դպրոց երթալու: Իր ուսուցիչներէն շատ յանդիմանութիւն կը լսէր:

— Ի՞նչպէս պէտք է ընէ կոկիկ տղայ մը,

---

41.—ԿՈԿԻԿ ՆՈՒԱՐԴԸ

---

Նրւարդն է ան մեր փոփրիկ,  
Միշտ վայելուց մրշտ կոկիկ.  
Ահա՝ կ'երայ ան դպրոց:  
Լաւ սորված իր դասն ու գոց:

Նրւարդն է ան մեր Նրւարդ  
Կոկիկ, մայուր ու զրւարք:

Տեսէ՛ հագուստն իր աղուոր,  
Կօշիկներն ալ՝ փայլուն, մոր,  
Եւ զողնոցն ու պարեզօս  
Որ չէ աղտոս կամ ծալիոն:

Նրւարդն է ան, մեր Նրւարդ,  
Կոկիկ, մայուր ու զրւարք:

Չենք ու երես լրւացուած,  
Մազերն ալ լաւ սահմարդւած,  
Անանկ սիրուն է ան որ  
Չիմք կը շոյեն ամէն օր:

Նրւարդն է ան, մեր Նրւարդ  
Կոկիկ մայուր ու զրւարք:

---



42.—ՔԱԶ ԵՂՋԵՐՈՒԻՆ

Օր մը եղջերուն ծիծաղեցաւ իր քրոջը  
եղնիկին վրայ ու ըստաւ :

— Դուն շատ վախկոտ ես, սիրելի քու-  
րիկ, հովի մը ձայնը, տերեւի մը խշտոցը  
կամ զայլի մը ոռնումը լսես թէ չէ, գը-  
լուխդ առած լեղապատառ կը փախչիս :

Այդ պահուն յանկարծ շան հաջիւնի  
ձայն մը լսուեցաւ :

— Վայ որսորդներն եկան, կանչեց մեր  
քաջ եղջերուն, ու բոլոր ուժովը վազեց  
քրոջը ետեւէն :

43.—ՄԵՐ ՏԱՆ ԵՏԵՒ

Մեր տան ետեւ խորունկ ձոր,  
Զիւն կուգայ մորմոր, մորմոր.  
Զիւն ուտեմ բարձրիկ սարէն,  
Զուր խմեմ մորմոր քարէն :

Կէս գիշերին դուրս ելայ,  
Մեւ ամպն անուշ կը ցոլայ,  
Կը ցոլայ բարձրիկ սարէն,  
Զուր խմեմ մորմոր քարէն :

44.—ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Աղքատիկ մայր մը իր փոքրիկ մանչը  
գրկած՝ գուրգուրանքու կը սիրէր : Անցորդ  
մը հարցուց անոր :

— Զաւկիդ նր բանը ամէնէն աւելի կը  
սիրես :

Մայրը քիչ մը մտածեց . յետոյ ըստաւ :

— Ինչ որ իր վրայ ամէնէն աւելի կը  
սիրեմ, այն է որ եղբեք անզամ մը իսկ  
սուտ խօսած չէ :



42.—ՔԱԶ ԵՂՋԵՐՈՒԽՆ

Օր մը եղջերուն ծիծաղեցաւ իր քրոջը  
եղնիկին վրայ ու ըսաւ :

— Դուն շատ փախկոտ ես, սիրելի քու-  
րիկ, հովի մը ձայնը, տերեւի մը խշրտոցը  
կամ զայլի մը ոռնումը լսես թէ չէ, գը-  
լուխդ առած լեղապատառ կը փախչիս :

Այդ պահուն յանկարծ շան հաջիւնի  
ձայն մը լսուեցաւ :

— Վայ որսորդներն եկան, կանչեց մեր  
քաջ եղջերուն, ու բոլոր ուժովը վաղեց  
քրոջը ետեւէն :

#### 43.—ՄԵՐ ՏԱՆ ԵՏԵՒ

Մեր տան ետեւ խորունկ ձոր,  
Զիւն կուգայ մորմոր, մորմոր .  
Զիւն ուտեմ բարձրիկ սարէն,  
Զուր խմեմ մորմոր քարէն :

Կէս զիշերին դուրս ելայ,  
Մեւ ամպն անուշ կը ցոլայ,  
Կը ցոլայ բարձրիկ սարէն,  
Զուր խմեմ մորմոր քարէն :

#### 44.—ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Աղքատիկ մայր մը իր փոքրիկ մանչը  
գրկած՝ գուրգուրանքով կը սիրէր : Անցորդ  
մը հարցուց անոր :

— Զաւկիդ ո՞ր բանը ամէնէն աւելի կը  
սիրես :

Մայրը քիչ մը մտածեց. յետոյ ըսաւ :

— Ինչ որ իր վրայ ամէնէն աւելի կը  
սիրեմ, այն է որ երբեք անգամ մը իսկ  
սուտ խօսած չէ :

Տղաք սուտ մի՛ խօսիք, անկեղծ եղէք,  
անկեղծութիւնը ձեր ամէնէն ընտիր յատ-  
կութիւնն է:

—Դուք սուտ կը խօսի՞ք արդեօք . . . :

ԱՌԱԾ.—Սախոսին տունն է այրեր, մեկը չէ հաւ-  
ացեր:

#### 45.—ՊԶՏԻԿ ՉԱՐԱՃՃԻՆ

Ե՞ն, ի՞նչ ընեմ ձեռիքս յէ ,  
Խելօֆ նսիլ ու կարդալ.  
Քիչ մի խօսիլ ու խնդալ  
Կարծեմ սակայն գէշ բան յէ :

Լուս, զանգակը կը զարնէ ,  
Պէսֆ է նսիլ, աշխատիլ.  
Օրիորդոս նո՞ն կեցեր է ,  
Պէսֆ յէ խնդալ ու խօսիլ:

Կը պատճեն զիս, կը սասեն,  
Խօսիլը լաւ յէ՝ կ'ըսեն .  
Բայց ի՞նչ ընեմ, ներեցէ՛ք,  
Լուս նսիլը ձեռիքս յէ :



#### 46.—ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

Փոքրիկ Գեղամն ու քուրիկը՝ Զարմինէն  
միասին պարտէվ իջան. Այնտեղ կային կա-  
պոյտ սմբուլներ, հոտաւէտ մանուշակներ,  
կարմիր կարմիր վարդեր, ճերմակ ճերմակ  
շուշաններ և ուրիշ շատ սիրուն ծաղիկներ :

Գեղամ ու Զարմինէ ուրախ զուարթ  
քաղեցին այդ ծաղիկներէն ու գեղեցիկ  
փունջներ կապեցին .

Այդ պահուն անոնք տեսան որ պար-  
տիզպանը մէկիկ մէկիկ կ'երերցնէ պարտէ-  
զին ծառերը և անոնց վրայէն շատ թրթուր-  
ներ ու բզէզներ վար կը թափին .

—Բնչու ատոնք վար կը թափես, հար-  
ցուց Գեղամ պարտիզպանին .

Ան ալ ըսաւ :

—Եթէ թրթուրներն ու բգէզները ծառերու վրայ մնան, տերեւներն ու պտուղները կ'ուտեն, այն ատեն դուք ոչ տունկ կ'ունենաք, ոչ ինձոր, ոչ ծիրան, ոչ ալ ուրիշ պտուղներ:

Մէջմնալ Զարմինէ պղտիկ ծառի մը վրայ տեսաւ շատ գեղեցիկ թոշուն մը: Կամացուկ մը մօտեցաւ ծառին և ուժով մը թօթուեց: Բայց թոշունը վար չինկաւ:

—Ի՞նչ եղաւ թռչնիկը, եթէ վար չինկաւ:

---

#### 47.—ՊՈՒՊԱՏԻԿԻՆԸ (անձրեւաբեր)

---

Պուպատիկինն եկեր է,  
Շարէ շապիկ հագեր է,  
Փեթկին ետեւ կանգներ է.  
Կարմիր կովէն եղ կ'ուզէ,  
Ճերմակ ծովէն ջուր կ'ուզէ,  
Սեւ հաւէն հաւկիթ կ'ուզէ,  
Փեթկին մէջէն մեղր կ'ուզէ:  
Պուպատիկինն եկեր է . . .

---



#### 48.—ԱՐԻՒԾՆ ՈՒ ԳՈՐԾԸ

---

Առիւծը գորտին կրկռալը լսեց ու ինք իրեն ըսաւ:

—Սա գուացողը մեծ զազան մը ըլլալու է:

Այս խօսքերն ըսելու ատեն մէյմն ալ նայիս գորտը ճահիճէն դուրս ելաւ: Առիւծն իսկոյն իր ուժեղ թաթը զարնելով՝ ճզմեց զայն:

—Ասկէ ետք՝ մինչեւ որ չտեսնեմ, չպիտի դատեմ, ըսաւ ինքիրեն:

---

#### 49.—ԲՈՒՍԻԿԸ

---

Սերմին մէջ պահուած  
Բոյս մը կայ սիրուն,  
Հոն հանգիստ պառկած  
Կը բաշէ իսր քուն:

Արթիշի՛ր, ըսին,  
Ճողերն արեւին,  
Արթիշի՛ր, ըսին,  
Ճիրերն ամարեւին:

Բուսիկն աշ իրաւ,  
Բուսէն արթիցաւ,  
—Ամարեւ ու արեւ,  
Հսաւ. ձեզ բարեւ:

—Մերմը ծլելէն վերջ բնչպէս կը մեծնայ:

## 50 —ԱՌՏՈՒԱՆ ՃԱՌԱԳԱՅՑԹՆԵՐԸ

Արեւն իր կլորիկ, պայծառ դէմքը գուրս  
հանեց լեռներուն ետեւէն և սկսաւ ամէն  
կողմ՝ դրկել իր ոսկեփայլ ճառագայթները:

  
Առաջին ճառագայթը սուրաց  
և ինկաւ արտոյտին վրայ: Ար-  
տոյտը թեւերը շարժտկեց, գուրս  
թռաւ բոյնէն, արագ արագ  
բարձրացաւ և երգեց իր առար-  
ռան գեղեցիկ երգը:

Երկրորդ ճառագայթը հանդիպեցաւ նա-  
պաստակին: Ճուտով  
նապաստակը շարժեց  
ականջները և զուար-  
թօրէն սկսաւ ցատկրո-  
տել ցողաթուրմ մար-  
գագետիններու վրայ:



Երրորդ ճառագայթը  
մտաւ հաւնոցը: Աքաղա-  
ղը թափահարեց թեւերը  
ու զիլ ձայնով կանչեց.  
«կու կու լիկ կու»: Հաւերը  
վար իջան իրենց թառե-  
րէն, կրկուացին և սկսան  
աղբը կտցել, ճճի գտնելու համար:

Չորրորդ ճառագայթը ինկաւ փեթակին  
վրայ: Մեղուն դուրս  
սլացաւ իր մոմեղէն  
խցիկէն, կեցաւ փե-  
թակին գուան առ-  
ջեւ, թեւերը բա-  
ցաւ և բղզալով թը-  
ռաւ, զնաց մեղր  
հաւաքելու ծաղիկներէն:



Հինգերորդ ճառագայթը՝ իջաւ բուխե-  
րիկէն վար, հասաւ  
մշակի անկողնին :  
Մշակը վեր ցատկեց  
տեղէն, խաչակնքեց  
երեսը, փառք տը-  
ռաւ Աստուծոյ, ու

արօրն առած, գնաց արտ' հողը հերկելու :

Վեցերորդ ճառագայթը  
գնաց, ուղղակի ինկաւ քը-  
նացող փոքրիկ մանուկին  
բարձին վրայ և սկսաւ անոր  
աչքերը ծակծկել: Մանուկը  
արթնցաւ, աչքերը շփեց ու  
ելաւ: Քիչ ետք ան ալ զիրքերն առաւ ու  
գնաց դպրոց :

— Ե՞րբ կը պատահին այս բոլորը:



### 51. — ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանանչ ուաքով,  
ես ծաղիկ եմ անուշ հոտով.  
Թէեւ տունկս է փոքրիկ ու ցած,  
Արօտներուն մէջ պահուըտած,  
Բայց իմ փունջըս մէջ ամէն տան,  
Թէ՛ աղքատի, թէ՛ մեծատան,  
Իբրեւ գալնան առաջին զարդ  
Կրնայ տեսնել միշտ ամէն մարդ:  
Ես եմ գարնան սիրուն գուշակ,  
Եւ իմ անունս է մանուշակ :

— Դեռ ուրիշ ի՞նչ ծաղիկներ գիտէք :

## 52.—ՄԱՆՈՒԿԸ ԱՐԵՒԻՆ

Իրիկուն էր : Փռքրիկ Միհրան զեռ կը  
խաղար պարտէզին մէջ :

Միհրանիկ աչքը վեր վերցուց , տեսաւ  
թէ կարմիր Արեւը կիսովին թաղուեր է լե-  
րան ետեւ :

— Արեւ , կարմիր Արեւ , գոչեց Միհրա-  
նիկ , կ'աղաչեմ . քիչ մըն ալ կեցիր , բնչ  
դործ ունիս յերան ետեւ , ինչո՞ւ կ'ուզես  
այդտեղ մտնել , կեցի՞ , ես զեռ կ'ուզեմ  
խաղալ , վազվել , ես զեռ փափաք չունիմ  
պառկելու , քնանալու .

Արեւը լսեց մանուկին խօսքերը ու պա-  
տասխանեց .

— Այ ժիր տղայ , ես չեմ կրնար կանգ  
առնել . յերան ետեւ զեռ ուրիշ շատ աշ-  
խարհներ կան . այնտեղերէն ալ քեզի պէս  
աշխոյժ մանուկներ կան որ ինծի կ'սպա-  
սեն , պէտք է որ անոնց ալ այցելեմ կար-  
գաւ . վաղը միւս կողմէն նորէն քեզի կը  
դառնամ առտուն կանուխ . զիշեր բարի . . . .

Վերջին խօսքը հազիւ թէ ըսած , Արեւը  
արդէն բոլորովին մտած էր յերան ետեւ :

— Արեւն ո՞ւր կ'երթայ զիշերը :

## 53.—ԳԻՇԵՐ ԲԱՐԻ

Ալ դադրեցան ծառին վըրայ  
երգերն անուշ թունիկին .

Լոեց աղմուկն աշխատութեան  
բանուորին ու մըշակին :  
Գիշե՛ր բարի . բարի զիշեր,  
Փոյրիկ մանուկ խաղասէր :

Մութը կոխեց . եւ առջեւեն  
Ցորեկն ու լոյս խոյս կուտայ,  
Կուգայ պահը յընանալու  
Գընա՛ . պառկէ , ժի՛ր սրդայ:  
Գիշե՛ր բարի . բարի զիշեր,  
Փոյրիկ մանուկ խաղասէր :

Հանգըստացի՛ր անկողնիդ մէջ  
եւ հըրեշտա՛կը յունի,  
Թո՞ղ այլերըդ մեղմիւ փակէ  
Թըմրութիւնով հեշտաշի:  
Գիշե՛ր բարի . բարի զիշեր,  
Փոյրիկ մանուկ խաղասէր :

## 54.—ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ՏԻԳՐԱՆԸ

Տիգրանին մի պզտիկ սղոց ընծայ տուին։  
Տիգրան այնքան ուրախ էր որ ձեռքն ին-  
կածը կը սղոցէր, կը կտրէր։ Պարտէզ իջաւ  
և կտրեց սալորի մատաղատունկ մը զոր  
հայրիկը տնկած էր և մեծ խնամք կը տա-  
նէր անոր։

Իրիկուան երբ հայրիկը տուն դարձաւ,  
պարտէզին մէջ տեսաւ կտրուած սալորե-  
նին։ Սաստիկ վշտացաւ և բարկութեամբ  
պոռաց։

—Ո՞վ է կտրեր այս ծառը, սաստիկ  
պիտի ծեծեմ եթէ գտնեմ կտրողը։

Տիգրան որ հօրը մօսն էր, լսեց հայրի-  
կին խօսքերը. քիչ մը մտածեց, յետոյ ըսաւ.

—Սուտ չեմ խօսիր, հայրիկ, ես կըտ-  
րեցի, սղոցովս կտրեցի, ծեծէ զիս։

Հայրիկին բարկութիւնն իջաւ եւ գորո-  
վալի ձայնով ըսաւ։

—Այս ծառը շատ սիրելի էր ինծի,  
Տիգրան, բայց քու ճշմարտախօսութիւնդ  
ամէն բանէ աւելի կ'արժէ. կը ներեմ քեզի  
քանի որ ճշմարիտ խօսեցար։

Եւ հայրիկը զրկեց, համբուրեց որդին։



## 55.—ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Գոմին, բակին մէջ մեր մեծ տան  
կենդանիներ կան զանազան։

Գիրուկ խոզն ու ցատքող հորթուկ,  
ձերմակ գառնուկն, ուլը խենդուկ,  
Այծը մօրուեղ ու սուր եղջիւր,

Հնդկահաւը՝ փայլուն փետուր,  
Խաթուն հաւը՝ կարմիր կատար,

Կոկողավիզն աքլոր աղբար,  
Սագն ու բադը՝ մեծ փոր, կարճոտ,

Գիշեր, ցորեկ ջուրի կարօտ =  
Ասոնք ամէնն ալ շարունակ

Զայն կը հանեն ամէն տեսակ։

Հորթը՝ մու, մու, մու, մու,  
Խոզը՝ բուխի՛, խի՛, խի՛, խի՛,

Գառնուկը՝ մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛,  
Այծը՝ պէ՛, պէ՛, պէ՛, պէ՛,

Հնդկահաւը՝ կուլա՛ք, կլա՛ք,  
Հաւը՝ կը՛տ, կը՛տ, կըտկըտա՛ք,  
Սագը՝ ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛,  
Բագը՝ վա՛ք, վա՛ք, վա՛ք, վա՛ք, վա՛ք :

—Ուրիշ ինչ կենդանիներ գիտէք մարդուն մօսն  
ու հետը ապրող :



### 56.—ԵՐԿՈՒԻ ՄՈՒԿԵՐ

Օր մը փոքրիկ մուկը մեծ մուկին ըսաւ :  
—Ո՞րքան չար ու ժլատ է մեր տան-  
տէրը, տունը կատուներով լեցուցեր է։ Այս  
ալ բաւական չէ, չորս կողմ ակնատներ կը  
դնէ ու կ'ուզէ մեզ սպաննել այս կերպով։  
Միթէ մենք շատ բանի՞ պէտք ունինք. կտոր  
մը ճարպ, քիչ մը հացի փշրանք և քանի մը  
հատիկներ բաւական են մեզի։

—Իրաւ է, պատասխանեց մեծ մուկը,  
մեղմէ ամէն մէկուն քիչ բան հարկաւոր է,  
բայց մենք ալ քիչուոր չենք :

ԱՌԱԾ. —Կատուն որ խաղայ, մուկն անպատճառ կը  
դողայ :

### 57.—ՊՏՂԱՍԽԵՐ ՏՂԱՆ

Ես մանչ մըն եմ գեղադէմ,  
Կարդալ զըրել ալ գիտեմ.  
Ճատ կը սիրեմ շաբար, մուշ  
Ու խաղողին համն անուշ :

Երէ ունի՛, հանեցէ՛,  
Ինձ ալ բաժին հանեցէ՛.  
Զանոնի կ'ուտեմ ես լափով,  
Ոչ անկիրբի պէս ափով։

ՀԱՆԵԼՈՒԿ 5. — Ոսկի կնունիկ, միջուկն անուշիկ։



## 58.—ԼԱՂԿԱՆ ՄԻՆԱՍԸ

---

Փոքրիկ Մինաս լալկան տղայ մըն էր :  
Լալով կ'արթննար, լալով կը քնանար .  
լալով կ'ուտէր, լալով կը խմէր : Երբոր մայ-  
րիկէն բան մը ուզելու ըլլար, լալով կ'ու-  
դէր : Երբոր ուզածը տային, պատճառ մը  
գտնելով նորէն կուլար: Հազիւ թէ կը դըպ-  
չէին իրեն, աւելի սաստիկ կուլար, ահազին  
վայնասուն հանելով :

Օր մը Մինաս տունին մառանը իջնել  
ուզեց և յանկարծ ծակի մը մէջ ինկաւ :  
Մինաս սկսաւ լալ, պոռալ, կանչել, բայց  
տունին մէջ ոչ ոք հոգ ըրաւ :

Խեղձը ծակին մէջէն աղիողորմ ճիշեր  
կարձակէր, բայց ի զուր, մէկը չէր գար զինք  
պատելու :

Վերջապէս հայրիկը լսեց Մինասին ճի-  
շերը, եկաւ գտաւ զինք եւ զուրս հանեց  
ինկած ծակէն :

Մինաս ալ անկէ յետոյ մոռցաւ լալկա-  
նութիւնը և ալ պարապ տեղը չէր լար:

—Ինչո՞ւ համար կարեւորութիւն չտուին Մինասի  
լացին եւ ժամանակին օգնութեան չեկան :

---

## 59. — ՄԵՐ ԺԱՄԸ

Ժամուն մէջ կայ խաչ ու խորան  
Քըշող, ծնծղայ, աւետարան,  
Մոմ, ջահ, կանթեղ, փիլոն, բուրկառ,  
Սուրբի պատկեր, խոյր ու շուրջառ :

Կը հաւաքուին հոն շատ մարդիկ,  
Աղօթք կ'ընեն մեծ ու պղտիկ .  
Յետոյ կ'առնեն մաս ու նշխար,  
Բոլոր մարդիկ համ-հաւա ար :

—Ինչ կ'ընեն ժամուն մէջ :

ԱՌԱԾ.—Սուրբին մոմ, տղուն կիլիկ:

---

## 60.—ԵՐԿՈՒԻ ԽԱՂԾՆԿԵՐՆԵՐ

---

Յակոր ու իր քոյրը Պերճուհի կը խազային իրարու հետ : Յակորիկ իր հոլը կը դարձնէր. Պերճուհի ալ իր ձիով կը խաղար

Յանկարծ Յակորիկ բարկացաւ և ըստ Պերճուհիին :

—Իմ հոլիս մի՛ մօտենար, ինծի հետ մի՛ խաղար :

—Դուն ալ իմ ձիուս ձեռք մի՛ դպցներ, պատասխանեց Պերճուհի նեղացած :

Տղաք քիթերնին բերաննին թթուեցուցին, իրարմէ հեռացան և սկսան առանձին խաղալ : Բայց մինակ սկսուած խաղը երկար չտեւեց և անոնք շուտով մէկդի նետեցին իրենց խաղալիքները :

—Ինչո՞ւ համար Յակորիկ և Պերճուհի նետեցին իրենց խաղալիքները :

---



## 61.—ԹՌՈՈՒՑԻԿ

---

Օ՛Ա, վե՛ր ելիր, վե՛ր ելիր,  
Իմ գեղեցիկ քըռուցիկ,  
Ամպերուն յով բարձրացիր  
Իրեւ արծիւ սըլացիկ :

Առասանցս երկայն է,  
Մրչափ ուզես, ելի՛ր վեր .  
Տեղս ընդարձակ ու մեծ է,  
Զկան ժեզի արգելվներ:

Հովը ահա՛ կը փըշէ  
Հիմա ժեզ քո՞յ տամ սիհտի ,  
Օ՛Ա, ժամը ճիշ յարմար է,  
Թըռի՛ր բարձրեւն երկինքի :

Օ՛Ա, վե՛ր ելիր, վե՛ր ելիր  
Իմ գեղեցիկ քըռուցիկ .

Առասանս երկայն է ,  
Մրցափ ուզես, վե՛ր ելիր :

---

## 62.—ԱԳՐԱԼԻՒՆ ԽՐԱՏԸ

---

Մայր ագռաւը ուզեց խրատ մը տալ  
իր ձագերուն , զանոնք թուցնելէ առաջ  
սկսաւ կանչել :

— Ղա, ղա, ղա . . . .

Զագերը իրենց մօր գլուխը ժողվուեցան : Այն ատեն ագռաւն ըսաւ :

— Զագնելիներս , ալ օդին մէջ ազատ  
պիտի թռչիք գուք , ձեզի խրատ մը տամ .  
գիտցէք որ մարդիկ չար են . զգնյշ կեցէք  
մարդոցմէ , մանաւանդ երբոր գետին ծոխն  
քար վերցնելու :

Զագռւկները քիչ մը մտածեցին . յետոյ  
ըսին :

— Սիրելի մայր , հապա ինչ ընենք եթէ  
մարդը առաջուց ձեռքին մէջ պահած ըլլայ  
քարը :

Մայր ագռաւը զարմացաւ իր ձագերուն խելացութեան վրայ ու ըսաւ :

— Ապրիք , ձագռւկներս , հիմայ հասկցայ  
թէ դուք իրաւ պիտի ապրիք :

ԱՌԱԾ.—Պլաստին իր տարսը կուշայ , ագռաւը դա ,  
դա կ'ընէկ :

---



## 63.—ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

---

Կաղանդ պապան ահա՛ հասաւ ,  
Խաղալիքներ մեզի բերաւ .  
Օրեր առաջ կ'սպասէինք ,  
Պէս պէս նըւէր կ'երազէինք :

Բերաւ նաև չամիչ, թուղ, նուշ,  
նուռ, տանձ, կաղին, արմաւ, նուշ.  
Ուտե՛նք խմ՛նք, ուրախ ցատե՛նք,  
Երգե՛նք, պարե՛նք ու քեզ դովենք :

Բարի՛ ծնողքս, բոլոր սրտէս  
Երկար օրեր կը մաղթեմ ձեղ.  
Միշտ երջանիկ, անվիշտ տարի,  
Երնորհաւոր ձեղ նոր տարի :

—Ի՞նչ կ'ընեն կաղանդին ու նոր տարիին :

---

#### 64.—ԱՂՈՒԿՍԻՆ ՈՒԽՏԸ

---

Աղուէսն անգամ մը, ինչպէս եղաւ,  
գետն ինկաւ ու պիտի խեղդուէր :

—Տէր Աստուած, պոռաց աղուէսը, զիս  
սա տեղէն ազատէ, քեզի աման մը խունկ  
կուտամ :

Աղուէսը կերպով մը ազատեցաւ գե-  
տէն :

—Հիմա թէ որ աման մը խունկ ծխեմ,  
Աստուած ալ պիտի նեղուի ծուխին մէջ,  
ըստ աղուէսը ինքիրեն, ու չկատարեց  
ուխտը :

Ուրիշ օր մը աղուէսը նորէն ինկաւ  
գետը :

—Աստուած, քեզի երկու աման խունկ,  
հառաչեց ջուրին մէջէն :

Բայց Աստուած ալ չի խաբուիր :

—Ի՞նչ եղաւ աղուէսին վախճանը :

---

#### 65.—ՆՈՐ ՏԱՐԻՆ ՈՒ ԱՂՔԱՏՆԵՐԸ

---

Հիմա swarjն անցաւ,  
երեսը դարձուց.  
Նո՞րն ահա եկաւ  
Եր դեմքը ցոցուց :

Տղամ խնդացին,  
Կերան խմեցին,  
Նոր եկող swarjն  
Դիմաւորեցին .

Բայց կան աղբասներ  
Մերկ անպատսպար,  
Մնացած անտեր  
Շատեր կան աւաղ :

Երբ անոնց հանեֆ

Բաժին մր պղտիկ,  
Ասուծմէ կ'առնեէք  
Հազարապատիկ:

---

### 66. — ՇՆԻԿՆ ՈՒ ՓԻՍԻԿԸ

---

Փիսիկն ու շնիկը խաղաղութեամբ  
Կ'ապրէին մէկ տան մէջ :

Օր մը խոհանոցին մէջ կտոր մը մսոտ  
ուկոր ձեռք անցուցին : Փիսիկն ուզեց որ  
ոսկորն ինք առնէ , ուաէ . շնիկն ալ ուզեց  
որ ինք ուտէ : Դէմ դիմաց անցան ու սկսան  
կռուրաթիլ :

Շնիկն ակռաները բացաւ ու սկսաւ  
խըռ, խըռ խօսիլ : Փիսիկն ալ մազերը տըն-  
կեց ու սկսաւ գէշ, գէշ մրմռալ :

— Հաւ, հաւ, հաչեց շնիկը :

— Միաւ, միաւ, մլաւեց կատուն :

Կոփւը մեծցաւ : Փիսիկը ճանկ մը նե-  
տեց շունին : Շնիկն ալ ակռայ մը զարկաւ  
կատուին :

Մէյմըն ալ զրացիին սեւ կատուն որ  
հեռուէն կոփւը կը դիտէր , կամաց կամաց

մօտեցաւ և յանկարծ ցատքելով՝ ոսկորը  
գետնէն խլեց ու փախաւ :

— Ո՞վ օգուտ քաղեց այս կոփւէն :

---

### 67. — ԽԵԼՕՔ ԴԱԼԻԹԻՆ ԿՈՎՃ

Կար ու չկար, ժամանակին Խելօք Դա-  
լիթ մը կար :

Օր մը Խելօք Դաւիթ քաղաք տարաւ  
իր կովը , տուաւ մունետիկին ձեռքը ու  
ծախու հանեց : Ատենէ մը ի վեր կովը քա-  
շած էր կաթը ու Դաւիթ գոհ չէր անկէ :

Մունետիկն սկսաւ Խելօք Դաւիթին  
կովը հրապարակին վրայ պտտցնել , անոր  
ամէն մէկ մաղին մէյմէկ գովք դնելով :

Խելօք Դաւիթ զարմանքով մտիկ ըրաւ  
մունետիկին գովեստները՝ իր կովուն վրայ ,  
և ինքիրեն ըսաւ .

— Թէ որ իմ կովս այսքան աղէկ է ,  
ինչո՞ւ ծախեմ :

Ու կովը մունետիկին ձեռքէն առնելով՝  
գեղը դարձաւ :

Ա.Ռ.Ա.Ծ.— Խենդն ըսաւ , խելօքը հաւատաց :

---

68.—ԶԱՏԻԿ

Զատիկ է եկեր ,  
 Մեղ նոր օր բերեր ,  
 Ու նոր օրուան հետ՝  
 Կարմիր հաւկիթներ :  
 Զատիկ է եկեր ,  
 Եղբայր , քոյր , ընկեր  
 Սիրով իրարու  
 Կուտան համբոյլներ :  
 Զատիկ է . Զատիկ ,  
 Կարմըրուկ Զատիկ :

—Ի՞նչ կ'ընեն Զատիկին , ինչո՞ւ կը սիրէք Զատիկը :

69.—ԱՆՀՈՒ ՏՂԱՆ

Միհրան դաս կը սորվէր : Երբոր դասը  
 լրացուց , թողուց գիրքերն ու տետրակները  
 սեղանին վրայ և դուրս գնաց խաղալու :

—Միհրանիկ , կանչեց մայրը , առաջ  
 ժողվէ գիրքերդ , յետոյ խաղա :

—Հիմա կը ժողվեմ , ըստ Միհրան , ու  
 դուրս գնաց առանց գիրքերը հաւաքելու :

Միհրանին փոքրիկ եղբայրը քիչ վերջ  
 մօտեցաւ սեղանին , ձեռք առաւ Միհրանին  
 գիրքերը որ պատկերներուն նայի : Յանկարծ  
 ձեռքը դպաւ բաց թանաքամանին , եւ Միհ-  
 րանին բոլոր գիրքերն ու տետրակները մե-  
 լանով լրդճեցան :

Միհրան լալով գնաց մօրը գանգատելու :

—Գիտցէ՛ք տեսնեմ , ի՞նչ ըստ մայրը՝ Միհրանին :



70. —ՄԵՂՈՒ

Հա՛ , ծագեցաւ արեգակը ,  
 Հա՛ , ծաղկեցաւ մամիշակը ,  
 Մեղուն բողուց իր փեթակը ,  
 Տզտրզալով , Տզտրզալով :

Մեղուն թրռաւ ծաղկէ ծաղիկ,  
Մեղըր առաւ յաղցր անուշիկ.  
Մոմը տարաւ հոտոս լուսիկ  
Բրդբրզալով. բզբրզալով:

Անուշ մեղըր մանըր սղոց.  
Դեղին մոմն ալ ամէն սրբոց:

—Մեղուն ի՞նչ կ'արտադրէ. ուրիշ ի՞նչ միջատներ  
գիտէք:

ԱՌԱԾ. — Հազար հեղ մեղր ըստ, բերանդ յանուշնար:

## 71.—ՅԱԶՈՂ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Օր մը մի քանի ընկերներու հետ որսի  
ելանք: Ամէնքս ալ ունէինք մէյմէկ ընտիր  
որսի հրացան, անկոթ և անփող:

Սարեր, ձորեր պտտեցանք որս փրնտր-  
ուելու: Շատ գնացինք, քիչ գնացինք, մէյմնալ  
հեռուէն տեսանք խոշոր, շատ խոշոր ան-  
հոգի եղնիկ մը որ մարմին ալ չունէր:

Անմիջապէս քաշեցինք մեր անկոթ ու  
անփող հրացանները, նշան առինք և թրան...

Կրակեցինք, ու զարկինք, սպաննեցինք ան-  
հոգի, անմարմին եղնիկը:

Ազա մեր անկոթ, անփող հրացաննե-  
րուն վրայ կերպով մը բեռուցինք այն խո-  
շոր անմարմին եղնիկը, եւ տքալով, վքալով,  
արիւն քրտինք մտնելով բերինք գիւղ:

Գիւղին մէջ ասղին ինկանք, անդին ին-  
կանք, անբերան դանակ մը ճարեցինք, և  
այդ անբերան դանակով լաւ մը մորթեցինք,  
քերթեցինք անմարմին եղնիկը:


Ցետոյ վնտուեցինք, գտանք ահազին  
կաթսայ մը որ տակ չունէր, տարինք, լե-  
ցուցինք անջուր լիճէն, անմարմին եղնիկը  
դրինք անտակ կաթսային մէջ և անկրակ  
օճախին վրայ աղէկ մը եփեցինք:

Կանչեցինք գուռ գրացի, բոլորուեցանք  
շուրջը, կերանք, կերանք, կերանք, այնչափ  
կերանք որ քիչ մնաց ճաթէինք . . . բայց ոչ  
աշքերնիս բան տեսաւ, ոչ բերաննիս բան  
մտաւ:

— Ինչու համար աչքերնին բան չտեսաւ, բերաննին  
բան չմտաւ:

## 72.—ԶՈՐՄ ԵՂԱՆԱԿ

Չորս եղբայր են, ամէն տարի  
Ման կուգան շուրջը մեր երկրի,  
Չորսն ալ հաւաար ունին հասակ,  
Եւ պարզեւներ՝ հազար տեսակ։  
  
Փոքը եղբայրն է պատանի,  
Բողբոջ, տերեւ, ծաղիկ ունի,  
Պայծառ արեւ, կանաչ արօտ,  
Որոնց տղաք են միշտ կարօտ։  
  
Երկրորդ եղբայրն՝ երիտասարդ,  
Կուտայ մեղի անձրեւ առատ,  
Անձրեւին հետ արեւ, ջերմ օդ,  
Յոյս կուտայ մեղ հունձքի ճոխ, յորդ։  
  
Երրորդ եղբայրն է չափահաս,  
Միրգերով լի ունի մի թաս,  
Եւ կը բաժնէ տղոց իր գանձ,  
Միրան, խնձոր, խաղող ու տանձ։  
  
Չորրորդ եղբայրն է ծերունի,  
Ցուրտ ու խաւար շալկած ունի,  
Կ'ամայացնէ այգի, անտառ,  
Ջիւնով ծածկէ լեռ, դաշտ ու ծառ։  
  
—Քանի՞ եղանակ ունի տարին, ըսէ՛ք անունները։



## 73.—ՕՉՆ ՈՒ ԳԵՂԱՑԻՆ

Աշնային ցուրտկեկ առտու մը գեղացին արտին մէջ գտաւ օձ մը որ ցուրտէն սառեր, թմրեր էր։

Գեղացին վերցուց օձը, դրաւ խարոյկին մօտ որ տաքնայ։

Օձը տաքնալով՝ քիչ վերջ թմրութենէն սթափեցաւ և ինչ ընէ՝ աղէկ։ գեղացիին վրայ վազեց որ խայթէ։

Գեղացին ալ իր բահովը զարկաւ օձին ու սպաննեց։

Ա.Ռ.Ա.Ռ.—Օձն իր շապիկը կը փոխէ, բնուքիւնը յի փոխէր։

ՀԱՆԵԼՈՒԿ 6.—Աչեր ունի, ոսեր չունի,  
Մարդ կ'սպաննէ, ձեռքեր չունի,  
Հաւկիր կ'ածէ, փետուր չունի,  
Շապիկ ունի, կար չունի։

## 74.—ՏԱՐՈՒԱՆ ԱՄԻՍՆԵՐԸ

Մարտը կուտայ ձիւնածաղիկ,  
Ապրիլը կուտայ մանուշակ,  
Մայիսին կը բացուի վարդը,  
Սունակը կ'երգէ անուշակ:

Յունիսը մեզի խոս կուտայ,  
Իսկ Յուլիսը՝ առաս ցորեն,  
Օգոստոսը տաճա ու խնձոր  
Եւ ուրիշ շատ հասուն միրգեր:

Սեպտեմբերը մեզի կուտայ  
Բազմաւեսակ լաւ խաղողներ  
Հոկտեմբերը՝ կարմիր գինին,  
Նոյեմբերը՝ կաղամբ ու բողի:

Դեկտեմբերին ալ ձիւն կուգայ,  
Յունվարին կը ծածկէ սար, ձոր,  
Փետրվարին ալ կ'սկսի.  
Փոփոխակի ցուրտ եւ տաք օր:

—Ի՞նչ է տարին, քանի՞ ամիս ունի տարին, քանի՞  
օր ունի ամիսը:

ՀԱՆԵԼՈՒԿ 7.—Ծառ մը ունիմ 12 ճիւղ ունի  
Ամեն մեկ ճիւղը 30 քուփ ունի:  
Ծառն ի՞նչ է, ճիւղն ի՞նչ է, քուփն ի՞նչ է:

## 75.—ԱՐԵՒ ՔՈՒՐԻԿԻՆ ՈՒ ԼՈՒՍԻՆ ԱՂԲԱՐԻԿԻՆ

Քոյր ու եղբայր էին Արեւն ու Լուսինը, երկուքն ալ աննման գեղեցիկ:

Մայրիկը պատուիրեց անոնց որ երթան, ցորեկն ու գիշերը հերթով հսկեն աշխարհքին:

—Մայրիկ, ես աղջիկ եմ, կը վախնամ, ես չեմ հսկեր գիշերը, ըսաւ Արեւ քուրիկը:

—Թէ որ կը վախնամ, դուն ցորեկը հսկէ, գիշերն ալ թող հսկէ Լուսին աղբարիկ, ըսաւ մայրիկը:

—Ցորեկն ալ կ'ամչնամ, ամէն մարդին նայի, ըսաւ Արեւը ու կեցաւ տեղը:

Այն ատեն մայրիկը բու ո մը ասեղ տուաւ Արեւին որ իրեն նայողին աչքերուն խօթէ ու մէկը չկարենայ իր երեսը նայիլ:

Գեղանի զաւակները հաւանեցան, և այն օրէն ի վեր Լուսինը գիշերները դուրս կ'ելլէ հակելու աշխարհքին և Արեւը՝ ցորեկները. միայն թէ Արեւը, ամչնալուն, չի թողուր որ նային իր լոյս-երեսին և բուռ մը ասեղ կը միէ իրեն նայողին աչքերուն ու կը լացնէ:

— Բաէ՛ք թէ կրնա՞ք Արեւին ուղղակի նայիլ, և եթէ  
նայիք, ի՞նչ կը պատահի:

ՀԱՅԵԼՈՒԿ 8.—Դպալ մը ներկ է, աշխարհ կը ներկէ:



### 76.—Ծ Ա. Ր Ի Կ

Այ նորատունկ իմ ծառիկ,  
Ծա՛ռ սիրական, գեղեցիկ,  
Արմա՛տ ձգէ հողին մէջ  
Որ չարժէ քեզ մըրիկ :

Քեզի համար ամէն օր  
Զուր կը բերեմ սափորով,  
Քու տակըդ ես կը փորեմ  
Որ զօրանաս դուն շուտով :

Ծաղիկ, տերեւ ու պըտուզ  
Թո՛ղ զարդարեն քու ճիւղեր,

Անո՞նց վըրայ թո՛ղ երդեն  
Անուշ ձայնով սոխակներ :

Երբ հաստընայ քու բունըդ,  
Այն ժամանակ փոթորիկ  
Թո՞ղ մուընչէ, որոտայ,  
Զի վսասեր քեզի, ծա՛ռիկ :

ԱՌԱԾ. — Ծա՛ռ քող ըլլայ, ծո՛ւռ քող ըլլայ:

### 77.—ԽՆՁՈՐԵՆԻԻՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Գարուն է. ինձորենին կոճկոտեր է :  
Ճատ չի տեւեր, կոճակները կը բացուին ու  
դուրս կուտան ծաղիկներ : Խնձորենիին բո-  
լոր ճիւղերը հիմա զարդարուած են վար-  
դագոյն ծաղիկներով :

Իրարու ետեւէ այցելուներ կուգան  
Խնձորենիին ու սիրով կ'ընդունուին :

Ամէնէն առաջ կուգան մեղուները, խըն-  
ձորենիին ծաղիկներուն մէջ կը խօթեն ի-  
րենց գլխիկները և անուշ հիւթը կը ծծեն :

Քիչ վերջ ծաղիկները կը պառուին, կը  
թափին ու խնձորենին կը զարդարուի ման-

Իիկ թարմ տերեւներով : Այս անգամ կու-  
գան թրթուրները և  
անյագաբար կ'ու-  
տեն անոր փափուկ  
տերեւները :



Կ'անցնի ժամանակ , կուգայ ամառը ու  
խնձորենին կը ծածկուի կարմրուկ խնձոր-  
ներով : Հիմա ալ անոր կ'այցելեն թռչնիկ-  
ներն ու մանուկները :

— Ինչո՞ւ համար խնձորենին կ'այցելեն թռչուններն  
ու մանուկները :

— Դեռ ուրիշ ի՞նչ ծառեր գիտեք :

## 78.—ԳԱՐՈՒՆ

Օ՞հ, ձրմենոք զընաց հեռում,  
Բարի եկաւ աղուոր զարուն.  
Թույունները բոյն կը շիմեն,  
Թիթեռնիկը եկաւ նորէն:

Երկինք կապոյց է ու պայծառ,  
Ծաղիկ հագան պարտէզ ու ծառ.  
Պղտիկ տրդաֆ. սիրո՞ւմ տրդաֆ.  
Ի՞նչ կեցեր ե՛ք, եկէ՛ք խաղամի:

## 79.—ԱՆՏԱՌԻՆ ՄԵԶ

Յոլակ հայրիկին հետ անտառը գնաց  
պարտելու : Երբոր վերադարձան , մայրիկը  
հարցուց Յոլակին :

— Պատմէ՛ նայիմ, ինչե՞ր տեսար անտա-  
ռին մէջ :

Յոլակ պատասխանեց :

— Շատ բան տեսայ , մայրիկ , ի՞նչ գե-  
ղեցիկ է անտառը : Ես շատ ման եկայ ան-  
տառին մէջ . այնտեղ տեսայ մեծ մեծ ծա-  
ռեր , իիտ իիտ բուսած : Երբ յոգնեցայ ,  
շատ մեծ ծառի մը տակ նստայ : Թռչուն-  
ները անուշ կ'երգէին անոր վրայ :

Անտառին մէջ տեսայ նաև փայտահատ-  
ներ : Անոնք իրենց կացիններով չոր ծառե-  
րը կը կտրաէին և վառելու փայտ կը պատ-  
րաստէին :

Տեսայ այնտեղ պաղ պաղ աղբիւրներ .  
Ես խմեցի անոնց անուշ ջուրերէն : Անտա-  
ռին մօտ կ'արածէր մօտակայ գիւղին նա-  
խիրը : Նախիրին մօտ պառկած էին խոշոր  
գամբռեր :



Յանկարծ՝ բնմք . . . Ես վեր ցատքեցի  
վախէս. թռչունները լոեցին : Մէյմնալ տե-  
սայ որ նապաստակը արիւնլուայ կը փախ-  
չէր. որսի շունն ալ կը վազէր ետեւէն :

—Ի՞նչ պատահած էր նապաստակին . որսորդները  
բնչ կ'ընեն :

---

### 80.—ԱՌՈՒԽԱԿ

---

Լերկ ժայռին մէջէն վճիռ մի առուակ  
կը բըխի մեղմիկ խոխոջ հանելով.  
Խորունկ ձորին մէջ կը հոսին արագ  
Փրփուր ալիքներն արծաթի փայլով :



Առաջ կը վազէ քաղցըր շըշուկով  
Դաշտեր, անտառներ, մարգեր կուգայ ման,  
եւ կարկաչելով, վեր վար սողալով,  
իր ափերուն շուրջ կը սրփոէ նոր կեանք :  
  
—Առուակն ո՞ւր կ'երթայ, գետակն ո՞ւր կ'երթայ,  
գետն ո՞ւր կ'երթայ :

---

### 81.—ԱՔԼՈՐԻՆ ԶՐՈՅՑԼ

---

Կար չկար, աքլոր մը կար :  
Օր մը ինչպէս եղաւ, այդ աքլորին ոտ-  
քը փուշ մտաւ :  
Աքլորը շատ աշխատեցաւ, չկրցաւ փու-  
շը ոտքէն հանել : Գնաց պառաւ մամիկի մը  
որ թռնիրը վառեր՝ հաց կ'եփէր, ու ըսաւ :  
—Մամիկ, մամիկ, կ'աղաչեմ, սա փու-  
քը հանէ ոտքէս :  
Մամիկը փուշը հանելով՝ թռնիրը ձգեց :

Մէկ-երկու օր վերջ՝ խելքին ինչ փչեց,  
աքլորը գնաց մամիկին, ետ ուղեց փուշը:  
Մամիկն ըստ :

—Փուշը վառեցաւ, ուրկէ տամ:

Աքլորը թուաւ, մամիկին հաց մը խլեց  
ու փախաւ :

Քիչ մը անդին գնաց, տեսաւ որ հովիւ  
մը թան է հարեր ու պիտի ուտէ: Ըստ:

—Հնվիւ, հնվիւ, առ սա հացը, թանիդ  
հետ կեր :

Հովիւը հացն առնելով՝ թանին մէջ փըշ-  
րեց ու կերաւ :

Ժամանակ վերջը՝ աքլորը գնաց հովիւին  
ու ըստ :

—Հացս կ'ուղեմ, ետ տուր :

Հովիւն ինչպէս ետ տայ կերած հացը:  
Աքլորը թուաւ, հովիւէն ալ մաքի մը առաւ  
ու փախաւ :

Գնաց, գնաց, նայեցաւ որ տեղ մը  
հարսնիք կ'ընեն: Մաքին տուաւ հարսնե-  
տէրերուն ու ըստ :

—Առէք աս մաքին, մորթեցէք, կերէք :

Անոնք ալ մորթեցին կերան:

Ետքը գնաց ու մաքին ետ ուղեց հարս-  
նետունին : Ըսին :

—Մաքին կերանք, ի՞նչպէս տանք :

Աքլորը թուաւ ու հարսնետունին հարսը  
խլեց, փախաւ :

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ որ մարդ  
մը նստեր, ճզտրիկ կը զարնէ: Աքլորը  
զմայլեցաւ ճզտրիկի ձայնին, հարսը տուաւ  
մարդուն, ճզտրիկն առաւ: Յետոյ ծառի մը  
տակ նստելով՝ սկսաւ ճզտրցնել ու խաղ  
կանչել :

Ճզտրը, ճզտրը, ճզտրիկ,  
Փուշիկ տուի, հացիկն առի,  
Հացիկ տուի, մաքին առի,  
Մաքին տուի, հարսիկն առի,  
Հարսիկ տուի, ճզտրիկն առի  
Ճզտրը, ճզտրը, ճզտրիկ . . . :


## 82.—ԵՐԵԲ ԶՈՒԿԵՐԸ

Լիճի մը մէջ երեք ձուկեր կ'ապրէին,  
ուրախ զուարթ կը լողային ու կը խաղալին  
ջուրերուն հետ :

Ձուկերէն մին խոհեմ բնութիւն ունէր,  
մէկը քաջ և յանդուգն էր, միւսը անհոգ և  
դանդաղ էր :

Օր մը ձկնորս մը եկաւ լիճին եղերքը

և կարթը ձգեց ջուրին մէջ : Կարթին ծալըը  
անցուած էր համեղ խայծ մը :



Խոհեմ ձուկը մօտեցաւ խայծին , կռա-  
հեց վտանգը և զգուշացաւ :

Յանդուգն ձուկը վագեց , խլեց խայծը ,  
բայց իր քաջութեամբը ինքզինք աղատեց  
կարթէն :

Դանդաղ ձուկը ապուշի պէս բռնուե-  
ցաւ կարթէն : Զկնորսը հանեց ձուկը ջու-  
րէն և դրաւ սակառին մէջ :

— Զկնորսն ի՞նչ ըրաւ բռնած ձուկը :



### 83. — Ն Ա Խ Ը

Քամին ծովուն երեսէն  
Ծիծաղադէմ կը մեւեր ,  
Եւ կը մղեր դէպ՝ առաջ  
Թէ փոյք ու թէ մեծ նաւեր :  
Իսկ նաւերը ճօմելով  
կը իսաղային ծովուն նես ,  
Եւ իրենց լայն թեւերով  
կը սուրային իրեւն նես :

— Քամին ի՞նչպէս առաջ կը քշէ նաւը :

### 84.— ԶԱՐԱԾՈՒՅԻ ՔԱՄԻՆ

Կը ճանչնամք Հով պապուկը : Ան երկու  
տղայ ունի , մէկուն անունն է Զեփիւոփկ ,  
միւսին անունն է Քամի :

Զեփիւոիկը շատ խելօք է, ամէն մարդ կը սիրէ զինք, բայց Քամին շատ չար է. ան բնաւ խելօք չի կրնար կենալ, ուր որ երթայ՝ կը կոտրէ, կը թափէ և անհամ կատակներ կ'ընէ :

Զարաճնի Քամին անգամ մը որ դուրս ելաւ, կը տեսնես որ ասդին օրիորդի մը զիսարկը կը թոցընէ զլուխէն. քիչ մը անդին ուրիշի մը հովանոցը ետև կը դարձնէ : Մէյմնալ կը նայիս որ կը յարձակի տանտիկնոջ փռած ճերմակեղէններուն վրայ, կը խլէ շապիկ մը, կը նետէ դրացիին պարտէզը, և ապա փողոցները ինկած՝ կ'արշաւէ խենդի պէս :

Ահա փողոցի աւագն ու փոշին հաւաներ է, վեր կը հանէ, անցորդներուն աւքն ու բերանը կը լիցնէ ու վըդ... կ'երթայ, կը կորսուի :

Յանկարծ բաց պատուհանէդ ներս կը մտնէ, սեղանիդ թուղթերն իրար կ'անցընէ, կը փչէ, կը մարէ ճրագը և քեզ մուժը կը թողու, ու ինք սուլելով, ծիծաղելով՝ կը խուսափի վառարանին ծակէն :

Ա.Ի.Ա.Ծ. — Քամիին թերածը յամին կը տանի :

### 85. — ԵՐԿՐԻ ՉՈՐՍ ԿՈՂՄԵՐԸ

—Գիտցիր, տղա՛յ, որ երբ կ'ըլլայ առաւօտ՝  
իմ ծոցէս դուրս կ'ընէ ելք  
Պայծառ արեւն որուն ունիս դուն կարօտ.  
իմ անունս է Արեւելլի:

—Յորեկէն վերջ՝ երբոր կ'ըլլայ իրիկուն,  
Դեռ չկոխած խաւար, մութ,  
Ես կ'առնեմ ծոցս արեւն որ հոն ըլլայ քուն.  
իմ անունս է Արեւմուսի:

—Ամառէն վերջ՝ երբոր կուգայ սառ ձմեռ  
Ու գուն ցուրտէն կը մըսիս,  
իմ ծոցէս միշտ կը փըշեն պաղ քամիներ .  
իմ ալ անունս է Հիւսիս :

—Զմեռէն վերջ՝ երբոր կուգայ շիք դարուն,  
Գիտցիր, տղա՛յ, որ իրաւ  
Ինձմէ կ'ելլէ շունչը տաքուկ հովերուն .  
իմ ալ անունս է Հարաւ :

—Ի՞նչ կը կոչուին երկրի չորս կողմերը, ի՞նչպէս  
կրնաս որոշել զանոնք :

## 86.—ՊԱՊՈՒԿԻՆ ՀԱՆԵԼՈՒԿԸ

Զմեռ իրիկուն մը տանուտէր Խաչոյենց  
դուռը զարկաւ ծերուկ մուրացիկ մը : Դու-  
ռը բացին :

**Ծերուկը աղաչական կերպարանքով մը**  
**ըսաւ :**

—Ես դարիպ եմ, ի՞նչ կ'ըլլայ, զիս այս  
գիշեր ներս առէք, ախոռին անկիւնը տեղ  
մը տուէք, պառկիմ:

Խաչոյի կինը գթասիրտ էր. խղճաց ծե-  
րուկին վրայ, զանի ներս առաւ ու տարաւ  
մեծ սենեակը, օճախին գլուխը նստեցուց :

Ծնթրիքէն վերջ՝ Խաչոյի թռոնիկները  
ժողվուեցան հիւր ծերուկին գլուխը և ըսին:

—Պապուկ, պապուկ, մեզի հէքեաթ մը  
պատմէ :

—Ես հէքեաթ-մէքեաթ չեմ զիտեր, ը-  
սաւ ծերուկը :

Փոքրիկները հէքեաթը շատ կը սիրէին.  
ուստի շատ աղաչեցին պապուկին որ ան-  
պատճառ բան մը պատմէ : Պապուկը՝ ճարը  
հատած, երբոր կը մտածէր թէ ի՞նչ պատ-  
մէ, նայեցաւ որ պատէն հարսին ոսկի շա-  
րոցը կախուած է, դարակին վրայ նորուկ  
կարմիր մուճակ մը դրուած է, ախոռէն ալ

ջորիի մը խրիսնջալու ձայնը կուգայ ական-  
ջին : Այն ատեն պապուկը տղոց դարձաւ  
ու ըսաւ :

—Ես հէքեաթ-մէքեաթ չեմ զիտեր,  
բայց ձեզի հանելուկ մը զուրցեմ, զիտցէք :

Պատին ճնկլուիկը ծոցիկս,

Ընափին կարմըրուկը տոտիկս,

Ախոռին քսքսուկը տկուկս,

Առտուն պապուկը հւր կը գտնէք....

Տղաքը չհասկցան պապուկին հանելու-  
կը, նորէն նորէն ըսել տուին, շատ մտա-  
ծեցին, շատ ալ խնդացին, մինչև որ քու-  
ներնին տարաւ :

Առտու եղաւ ամէնքն ալ արթնցան,  
ելան : Պապուկը փնտուեցին, բայց պապուկ  
չկար, գնացեր էր : Մէջմնալ նայեցան որ  
պատին ոսկի շարոցը չկայ, դարակին մու-  
ճակն ալ չկայ, ախոռին ջորին ալ չկայ :

Հիմա զիտցէք նայիմ, ի՞նչ էր պապուկին հանե-  
լուկը :





87. — Բ Ա. Դ Ի Կ Լ

Բա՛ղիկ, բա՛ղիկ,

Կարմիր քարիկ,

Ուր կ'երթաս դուն

Կամաց, կամաց,

Չագուկները

Չորս կողմդ առած :

— Կ'երթամ վճիս ջուր գտնելու

Չագուկները լուանալու,

Չագուկները մայուր, մայուր,

Տղոց երեսն է աղս ու մուր :

— Բաղդատեցէ՞ք բաղը հաւոն հետ. բաղը ի՞նչ կը  
սիրէ. հաւը ջուր կը սիրէ :

Ա.ՌԱԾ.— Բաղը ջուր կը պոռայ, հաւը՝ չոր:

88.— ՄԱՄԱՆ ՈՒ ԱՆՇԵՂԸ

Կ'ըլլայ չ'ըլլար, ժամանակին մամա մը  
կ'ըլլայ :

Օր մը մաման այծը կթելով՝ կաթը մէկ  
կողմ կը դնէ: Մէյմնալ անծեղ մը կուգայ,  
մամային կաթը կ'ուտէ, կը թափէ: Մաման  
վրայ հասնելով՝ ձեռքի փայտովը անծեղին  
կը զարնէ, պոչը կը կտրէ :

Անծեղը կ'ըսէ

— Մամա, մամա, պոչիկս տուր :

Մաման ալ կ'ըսէ :

— Կաթս տուր որ պոչիկդ տամ:

Անծեղը կ'երթայ կովուն ու կ'ըսէ :

— Կնվիկ, կնվիկ, կաթ տուր ինծի :

Կովս ալ կ'ըսէ :

— Խոտ բեր ինծի որ կաթ տամ:

Անծեղը կ'երթայ արախին ու կ'ըսէ :

— Արտիկ, արտիկ, խնատ տուր ինծի :

Արտն ալ կ'ըսէ :

— Զուր բեր ինծի որ խոտ տամ:

Անծեղը կ'երթայ աղբիւրին ու կ'ըսէ :

— Աղբիւր, աղբիւր, ջնար տուր ինծի :

Աղբիւրն ալ կ'ըսէ :

— Կնւժ բեր ինծի որ ջուր տամ:

Անծեղը կ'երթայ աղջկան մը ու կ'ըսէ :

—ԱՌՋԻԿ, աղջիկ, կուժդ ինծի տուր :  
 Աղջիկն ալ կ'ըսէ :  
 —Ինծի կօշիկ բեր որ կուժս տամ :  
 Անծեղը կ'երթայ կօշկակարին ու կ'ըսէ :  
 Կօշկար, կօշկար, ինծի կօշիկ տուր :  
 Կօշկարն ալ կ'ըսէ :  
 —Կաշի բեր ինծի որ կօշիկ տամ :  
 Անծեղը կ'երթայ խաղախորդին ու կ'ըսէ :  
 Խաղախորդ, խաղախորդ, ինծի կաշի  
 տուր :  
 Խաղախորդն ալ կ'ըսէ :  
 —Հաց բեր ինծի որ կաշի տամ :  
 Անծեղը կ'երթայ հացարարին ու կ'ըսէ :  
 —Հացարար, հացարար, հաց տուր ինծի :  
 Հացարարն ալ կ'ըսէ :  
 —Ալիւր բեր ինծի որ հաց տամ :  
 Անծեղը կ'երթայ ջաղացպանին ու կ'ըսէ :  
 —Ջաղացպան, ջաղացպան, ինծի ա-  
 լիւր տուր :  
 Ջաղացպանն ալ կ'ըսէ :  
 —Յորեն բեր ինծի որ ալիւր տամ :  
 Անծեղը կ'երթայ կալւորին ու կ'ըսէ :  
 —Կալւոր, կալւոր, ինծի ցորեն տուր :  
 Վերջապէս կալւորը կուտայ ցորենը :  
 Անծեղը կը տանի ցորենը ջաղացպանին,  
 ջաղացպանն իրեն ալիւր կուտայ, ալիւրը  
 կը տանի հացարարին, հացարարն իրեն հաց

կուտայ, հացը կը տանի խաղախորդին, խա-  
 ղախորդն իրեն կաշի կուտայ, կաշին կը  
 տանի կօշկարին, կօշկարն իրեն կօշիկ կու-  
 տայ, կօշիկը կը տանի աղջկան, աղջիկն  
 իրեն կուժ կուտայ, կուժը կը տանի աղ-  
 իւրիւրին, աղրիւրն իրեն ջուր կուտայ, ջուրը  
 կը տանի արտին, արտիկն իրեն խոտ կու-  
 տայ, խոտը կը տանի կովուն, կովիկն իրեն  
 կաթ կուտայ, կաթը կը տանի մամային,  
 մաման ալ իրեն պոչիկը կուտայ :

---

### 89. — ՏՕՆԻ ՕՐԵՐ

---

Յունուարին մենք ունինք Մնոնդ,  
 Փետրուարին՝ Տաճար-Գալուստ :  
 Մարտը մեղի կը բերէ Զատիկ .  
 Հետն ալ մի թունդ Նաւակատիք .  
 Ապրիլը՝ մեծ Սուրբ Աւետում,  
 Մայիսին ալ Սուրբ Համբարձում :  
 Յունիսը կը բերէ Վերուստ  
 Ելնորհք բաժնող Հոգեգալուստ :  
 Յուլիսը միշտ փայլուն, պայծառ  
 կը բերէ մեղի Սուրբ Վարդավառ :  
 Օգոստոսին ալ ճիշտ կէսին՝

Վերափոխումըն Սուրբ Կոյսին :  
Սեպտեմբերին Սուրբ Խաչ կուգայ ,  
Անկէ վերջն ալ Խաչ Վարագայ :

— Դեռ ուրիշ ի՞նչ տօներ գիտէք :

### 90.—ՇՈՒՏԱՄՍԵԼՈՒԿ

Մեր պարտէզին ծայրը կայ տասը տանձի ծառ .

Տասը տանձի ծառին ծայրը տասը ծանր տանձ :

Զեր պարտէզին ծայրն ալ կայ տասը տանձի ծառ . տասը տանձի ծառին ծայրը տասը ծանր տանձ :



### 91. — ՇՈՒՏԱՄՍԵԼՈՒԿ

Շատ մը մկնիկներ միասին կը խաղա-  
յին , անհոգ և ուրախ : Ունէին փայլուն գորշ  
մորթ և երկանկէկ պեխեր :

Սուտու մը մաման կանչեց զիրենք ու  
ըսաւ :


— Մարիկ ըրէք, ձագնւկներս, ձեզի խրատ  
մը պիտի տամ : Մարդիկ մեզ կ'ատեն . տու-  
ներու մէջ կատու կը պահեն որ մեզ ուտէ,  
ծուղակ կը լարեն որ մեզ բռնէ : Զգնշ կե-  
ցէք, չըլլայ որ փորձանքի հանդիպիք : Փա-  
խէք մանաւանդ ծուղակներէն :

Մկնիկները խօսք տուին մամային խը-  
րատը պահելու :

Ծնոնցմէ մէկր որ միւսներէն աւելի  
անվախ էր, օր մը հեռացաւ քիչ մը իրենց  
ծակէն : Յանկարծ անկիւն մը աշքին հան-  
դիպեցաւ ծուղակ մը : Ուզեց գիտնալ թէ  
ծուղակն ինչ տեսակ բան մըն է . կամաց  
կամաց մօտեցաւ ու տեսաւ ծուղակին մէջ  
ապուխտի իւղու կտոր մը :

Իրաւ որ ապուխտը շատ անուշ կը  
հոտէք : Մկնիկը փափաքեցաւ աւելի մօտէն  
հոտոտել զայն, քիչ մըն ալ առաջացաւ, յե-

տոյ ետ գնաց, նորէն առաջացաւ և վերջապէս ապուխտին դպաւ :



Շըամի... ծուղակը փակուեցաւ ու խեղճ մինիկը բանտարկուեցաւ մէջը :  
Ժամ մը վերջը տանտէրը եկաւ, բերաւ կատուն և բացաւ ծուղակին դուռը :

— Ե՞նչ ըրաւ կատուն մինիկին երրոր ծուղակը բացուեցաւ :

Ա.Ա.Ծ.—Կատուին խաղը մուկին մահն է:

## 92.—ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒԻ ՎԵՃԸ

Ախոռին մէջ միասին կանգնած էին եղը, կովը, ձին ու էշը : Գիշեր մը ասոնք վէճի բոլուեցան իրարու հետ, թէ տէրը՝ իրենց-մէ որն աւելի կը սիրէ :

— Ի հարկէ մեր տէրը ամէնէն աւելի զիս կը սիրէ, կ'ըսէր եզը, ես եմ որ անոր արտը կը հերկեմ, ցորենը կը կամնեմ, սայլը կը քաշեմ: Եթէ ես չըլայի, ան ի՞նչպէս պիտի ապրէր :

— Ո՛չ, զիալ բերաւ կովը, մեր տէրը զիս կը սիրէ ամէնէն աւելի : Հէ՞ մի որ ես եմ որ կը զիեցնեմ ու կը մեծցնեմ քեզի պէս եղները: Ու յետոյ ես տիրոջս կուտամ կախ, մածուն, սեր ու կարագ և կը կերակրեմ անոր ամբողջ ընտանիքը :

— Կը սխալիք, ձայնեց անդիէն աշխոյժ ձին շփացած ձեւով մը, մեր տէրը զիս ձեզմէ աւելի կը սիրէ . Հէ՞ք տեսներ թէ ան ի՞նչպէս զիս կը փայփայէ, ի՞նչպէս գեղեցիկ թամրով զիս կը զարդարէ, որովհետեւ ես եմ որ զինք իմ վրաս կը հեծցնեմ ու կը պտտցնեմ լեռ ու սար, դաշտ ու անտառ :

— Բարեկամներ, կանչեց անդիէն ականջը կախ իշուկը, մի՛ մոռնաք թէ մեր տիրոջը համար ամէնէն աւելի ես կ'աշխատիմ: Ես եմ որ փայտ կը կրեմ անտառէն, ցորենը կը տանիմ ջաղացք ու ալիւրը կը բերեմ. ու դեռ որ մէկն ըսեմ. բոպէ մը հանգիստ կեցած չունիմ: ոչ մէկդի ինձի չափ չարքաշ էք: մեր տէրը պէտք է որ ամէնէն աւելի զիս սիրէ :

Շունը որ ախոռին դրան դուրսը պառկած էր, լսեց ներսի կենդանիներուն վէճը, և չկրնալով համբերել, ինք ալ խօսքի մէջ ինկաւ :

—Պարապ խօսքեր կ'ընէք , ըսաւ , նով  
չ զիտեր որ մեր տէրը ձեր բոլորէն աւելի  
զիս կը սիրէ , վասնզի զիշեր ցերեկ ես կը  
պահպանեմ անոր հօտերը , տունը և բոլոր  
հարստութիւնը :

Այդ պահուն տէրը վրայ եկաւ և իմա-  
նալով վիճաբանութիւնը , ըսաւ .

—Իրարու հետ մի՛ վիճիք , դուք ամենքդ  
ալ ինծի հարկաւոր էք , ոչ մէկդ կրնայ ը-  
նել միւսին ըրածը . այդ պատճառաւ ես ձեզ  
ամենքդ ալ կը սիրեմ :

—Ի՞նչ ծառայութիւններ կ'ընեն մեզի այծը , ոչխա-  
րը , հաւը , սագը , ուղարք . գոմէշը :

### 93.—ԼՈՒՍԻՆ ՊԱՊՈՒԿ

Նայէ , տղա՛ս , լերան վրայ  
Լուսին պապուկն է եղիր ,  
Երկինքն ի վեր կ'երբայ պայծառ ,  
Ուկին գոյն է յորդեր :

Եկո՛ւր , եկո՛ւր , լուսին պապուկ ,  
Մտի՛ր մանջուս ծոցը փափուկ :  
Նայէ , մա՛նջը , լուսին պապում  
Լոյս-երեսին կըս-կըլոր .

Ենչ մանժուսիկ ֆիք ու քերան  
Աշկունին ունի ան աղուոր :  
Եկո՛ւր , եկո՛ւր , լուսին պապուկ ,  
Մտի՛ր մանջուս ծոցը փափուկ :

Աշ իմ մանշուս , լուսին պապուկ ,  
Մի՛ նայիր ծուռ ծուռ դէմին :  
Զէ՛ , զաւակըս ա՛շ ինչօֆ է ,  
Չըլլա՛յ ձրգիս յար զիսին :  
Եկո՛ւր , եկո՛ւր , լուսին պապուկ ,  
Մտի՛ր մանջուս ծոցը փափուկ :

Կանչէ՛ , մա՛նջըս , լուսին պապու ,  
Կանչէ՛ ձայնովդ անուշիկ .  
Թո՞ղ վար իջնէ , ու իրարու  
Տըւէ՛ սիրոյ թիւր պայիկ :  
Եկո՛ւր , եկո՛ւր , լուսին պապուկ ,  
Մտի՛ր մանջուս ծոցը փափուկ :

Թափէ՛ վերէն , լուսին պապուկ ,  
Մանջուս շատ շատ ինչի , շնորհ ,  
Որ իմաստուն , բարի ըլլայ  
Ու հրնազանդ միշտ իր մօր :

Եկո՛ւր , եկո՛ւր , լուսին պապուկ ,  
Մտի՛ր մանջուս ծոցը փափուկ :

ՀԱՆԵԼՈՒԿ 9. — Լերան եսեւ կես կարայ :

## 94.—ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

Առաջու է. պղտիկ տղաք դպրոց կ'երթան : Երեք մանուկներ ալ դաշտը ելան պտրտելու , զրօսանք ընելու : Այնտեղ տեսան տեսակ տեսակ սիրուն բգէզներ , որ բզզալով , տղղալով՝ ուրախ զուարթ կը թըռչէին օդին մէջ :

—Սիրուն բգէզներ , եկէք , մեզի հետ խաղացէք , ըսին մանուկները :

—Ո՛չ , ոչ , մենք գործ ունինք , մենք չենք կրնար ձեզի հետ խաղալ , ըսին բգէզները միաբերան , ու թռան , հեռացան :

Մանուկները գնացին , գնացին և խումբ մը մըջիւններ տեսան :

—Փոքրիկ մըջիւններ , եկէք , քիչ մը խաղանք միասին :

—Ո՛չ , ոչ , մենք գործ ունինք , մենք ժամանակ չունինք խաղալու , մենք պաշար հաւաքելու վրայ ենք , ըսին մըջիւնները ու շարունակեցին ճամբանին :

Մանուկները նորէն քալեցին ու տեսան շատ թռչուններ , որ ձլուըլալով կը թռչէին վեր վար :

—Սիրելի թռչնիկներ , եկէք , քիչ մը խաղանք միատեղ , ըսին մանուկները :

—Ո՛չ , ոչ , մենք գործ ունինք , մենք մեր ձագերուն կեր կը տանինք , մենք չենք կըրնար ձեզի հետ խաղալ . ըսին թռչունները , ու սուրացին շտապով :

Մանուկները քիչ մըն ալ քալեցին ու յանկարծ ծառերու վրայ տեսան սկիւռներ որ արագ արագ կը վագէին ոստոստելով :

—Փափկիկ սկիւռներ , եկէք , վար իջէք , քիչ մը խաղանք միատեղ , ըսին մանուկները :

—Ո՛չ , ոչ , մենք գործ ունինք , մենք ու տեսատ պիտի ճարենք , մենք ժամանակ չունինք խաղալու , ըսին սկիւռները , ու աւելի արագ փախան , գնացին .

Մանուկները նորէն առաջ քալեցին ու տեսան առուակ մը որ գիղիլ կը հոսէր :

—Վճիտ առուակ , կեցիր , քիչ մը խաղանք միասին , ըսին մանուկները :

—Ո՛չ , ոչ , ես գործ ունիմ , ես ժամանակ չունիմ ձեզի հետ խաղալու . բոյսեր , թուփեր , ծառեր ու ծաղիկներ ինծի կ'սպասեն : ինծի կը սպասեն այծեր , ոչխարներ , ուլեր , գառնուկներ որ անուշ ջուրէս խմեն . զովանան : ինծի կը սպասեն ուրիշ առուներ . մենք իրարու կը միանանք , կը մեծնանք , ջաղացքի քարելը կը դարձնենք որ ձեզի

համար ալիւր պատրաստուի , բսաւ առուակը ու շարունակեց գլուխով հոսիլ :

Մանուկները տիրեցան . անոնք զար մացան թէ ինչնւ ոչ մէկը չուզեր իրենց հետ խաղալ :

—Մանուկներն ի՞նչ պարտէին ընել :

ԱՌԱԾ .—Ես աղա, դուն աղա, ջաղացին ո՞վ աղա:



### 95. — Զ Ա Ղ Ա Ց Բ Հ

Մեր դիւզին շատ մօտիկ՝  
Ջաղացք մը կայ մենիկ .  
Կը լսուի ամէն օր  
Միակերպ իր ժխոր .  
Ան գարի կամ ցորեն  
Նարունակ աղալէն ,

Կը դառնայ օրն ի բուն ,  
Զայրագին, աննըկուն .  
Ջաղացպանն ու իր կին  
Շատ բարի սիրու ւնին .  
Ամէն մարդ անոնց քով  
Կը դանէ էր, գորով :

ՀԱՆԵԼՈՒԿ 10.—Երկու սար, կը կրծեն զիրաւ:



### 96. — Վ Ա Գ Ր Ն ՈՒ Կ Ա Տ ՈՒ Ի Ն

Վագրը կատու տեսած չէր ամենեւին :  
Օր մը կը հանդիպի կատուին ու կ'ըսէ :  
—Քեսարդի, զուն մեզմէ կը նմանիս ,  
ինչնւ այսչափ պատիկ մնացեր ես :  
Կատուն կ'ըսէ :

—Ա՛խ, մի հարցներ քեռի, աղամորդին ձեռքն ինկողը ասանկ պղտիկ կը մնայ :

—Ո՞վ է դա աղամորդին, ցուցիւր նայիմ, կ'ըսէ վագրը :

Կատուն ալ կը տանի վագրը ու անոր կը ցուցնէ մարդ մը որ լեռը փայտ կը կտրէր :

Վագրը կը մօտենայ մարդուն ու կ'ըսէ :

—Դնւն ես աղամորդին, եկուր նայիմ, մէյմը հետդ մարտնչինք :

—Շատ լաւ, մարտնչինք, կ'ըսէ մարդը, բայց կը վախնամ որ կը փախչիս . մինչեւ որ երթամ, ուժս տունէն բերեմ, եկուր թաթդ սատեղ զիր որ չփախչիս, կ'ըսէ մարդը, ցոյց տալով ճեղքը կոճղին որուն զարկած էր կացինը :

—Զեմ փախչիր, կ'ըսէ վագրը ու միամիտ կերպով թաթը կը դնէ ճեղքին մէջ : Մարդը անմիջապէս անդիէն կացինը դուրս կը քաշէ ճեղքէն և վագրին թաթը կը սեղմըւի կոճղին մէջտեղ :

Մարդը իսկոյն փայտ մը կ'առնէ, ու կ'սկսի սաստիկ ծեծել վագրը :

—Աման, քեռհրդի, աս ինչ թակարդ էր որ ձգեցիր զիս. ողջ մնայի, հոգ չէր՝ բեզի

չափ մնայի, կ'ըսէ վագրը, ողբագին մոնչելով :

—Վագրը ո՞ւ կը բնակի, կատուն՝ ո՞ւր :

—ԱՌԱԾ.—Մէ՛ծ կեր, մոծ մի՛ խօսիր :

### 97.—ՎԻՃԱԿԻ ԵՐԳ

Աս ի՞նչ կոճիկ մոճիկ է,  
Եկեր իշեր մեր սունը.  
Շարէ շապիկ հազեր է,  
Քրան լայլիկ ձգեր է,  
Բակն արեւով լցեր է,  
Մանուկ սղան ժեւեր է,  
Գնացեր, մօրկան ըսեր է,  
Մօրկան խելլին անցեր է,  
Խոյ մը մատաղ քրեր է:  
Քար գողնամ. խիճ գողնամ,  
Եօրն աղբաւրէ ջուր գողնամ:





### 98.—ԳԱՅԼՆ ՈՒ ՄՈՐ ՎՐԵԺԸ

---

Գեղացի կին մը արտին մէջ կ'աշխատէք  
իր էրկանը հետ : Իր փոքրիկ երախան ալ  
դրած էր արտին եզերքը ուր կը քնանար  
ան մշիկ, մշիկ :

Կէսօրին էրիկը իջաւ ձորր՝ ջուր բերե-  
լու համար : Այդ պահուն անօթի գայլ մը  
յանկարծ դուրս ելաւ մօտակայ անտառէն  
և արտին եզերքէն երախան յափշտակեց,  
տարաւ :

Մայրը տեսաւ ու վազեց գայլին ետե-  
ւէն, վազեց, վազեց ու շունչը կորած՝  
կանգնեցաւ սարի մը զլուխը : Այնտեղէն  
սկսաւ գալիին ետեւէն անէծքներ կարդալ:  
— Անողօրմ գազան, կրողը տանի քեզ,

հւը կը տանիս երախաս, անքդ կուրնայ,  
տունդ աւերի, զետինն անցնիս . անողօրմ,  
շար . . .

Այսպէս բաւական պոռալ-կանչելէ յե-  
տոյ՝ մայրը հանդարտօրէն դարձաւ արտը և  
յաղթական ձեւով մը էրկանն ըստաւ .

— Զար գայլը տարաւ երախան, բայց ես  
ալ վրէժս առի, ետեւէն խօսք չափեցի,  
խօսք չափեցի որ . . .

---

### 99.—ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԶՈՒՐԾ

---

Հովտէն ի վար ոս վայրենի  
Զուր մը զուլալ գիլ, գիլ կ'անցնի:  
Թուխ մանուկ մը ափն է վազեր,  
Զեռքն ու երեսն է լըւացեր.  
Լրացեր է ձեռքն ու երես,  
Դարձեր ջուրին է հարցուցեր :  
— Դուն ո՞ր լեռնէն կուգաս, ջըրիկ,  
Ո՞յ իմ պազուկ ջըրիկ մեղրիկ :  
— Ես կուգամ այն լեռնէն բարձրիկ  
Որ հին ու նոր ձիւն կայ վըրան :  
— Դուն ո՞ր առուն կ'երթաս, ջըրիկ,  
Ո՞յ իմ պազուկ ջըրիկ մեղրիկ :

— Ես կ'երթամ այն առուն գողտրիկ  
Որուն ափերն են ծաղկալից։  
— Դուն ո՞ր պարտէղ կ'երթաս, ջըրիկ,  
Այ իմ պաղուկ ջըրիկ մեղրիկ։  
— Ես կ'երթամ այն պարտէղ քաղցրիկ  
Ուր պլպուլը կ'երգէ այգուն։  
— Դուն ո՞ր ծառը կը ջրես, ջր՛րիկ,  
Այ լոմ պաղուկ ջըրիկ մեղրիկ։  
— Ես կը ջրեմ այն ծառն աղուորիկ  
Որուն տակն է մշտագալար։

---

րես կուտան, բայց իմ ծառայութիւններէս  
ոչ մէկը կրնաս կատարել դուն։ Տուն շինե-  
լու համար մարդիկ ոսկի կացինով չեն կըտ-  
րեր փայտը, ցորեն հասցրնելու համար ար-  
տը ոսկի արօրով չեն հերկեր, տեսակ տե-  
սակ մեքենաները ոսկիով չեն շիներ։ Ու  
յետոյ եթէ մարդիկ ինձմով շշինէին բրիչը,  
ինչպէս քեզ պիտի հանէին հողին տակէն։  
Ոսկին ուզեց պատասխան տալ, բայց  
պատասխան չգտաւ։

— Ի՞նչով կը շինեն արօրը, բահը, կացինը, ուրագը,  
մուրճը, բրիչը մեքենաները։

— Դեռ ուրիշ ի՞նչ մետաղներ գիտէք։

Մետաղներն ուրկէ կը հանեն և ի՞նչպէս։

### 100.—ՈՍԿԻԻՆ ՈՒ ԵՐԿԱԹԻՆ ՎԵՃԸ

---

Անգամ մը ոսկին ու երկաթը իրարու-  
նետ վէճի բռնուեցան։

— Ես ամէնէն ընտիր մետաղն եմ, կ'ր-  
սէր ոսկին, ամէնըրը զիս կը սիրեն ու կը  
պաշտեն։ Մարդիկ ինձմով շինած են դրամը,  
ինձմով կը շինեն գեղեցիկ շղթաներ, սիրուն  
մակեակներ, մատանիներ, օղեր և ուրիշ  
շատ աղուոր զարդարանքներ։ Է՞հ, ի՞նչ եր-  
կարեմ, ես ամբողջ աշխարհը կրնամ գնել։

— Շատ մի պարծենար, պատասխանեց  
երկաթը, իրաւ է թէ մարդիկ քեզի շատ ե-



## 101.—ԱՂՈՒԷՆ ՈՒ ԽԱՂՈՂԸ

Աղուէսը շատ վազեր ու յոգներ էր, շատ ալ ծարաւած էր :



Այդ պահուն այգիի մը քովին անցնելով՝ տեսաւ բարձր սարփինալին վրայ դեղին, հասուն խաղողներ :

Սա խաղողէն քիչ մը ուտեմ, ըսաւ աղուէսը ու մօտեցաւ սարփինալին :

Աղուէսը վեր ցատքեց, բայց չհասաւ խաղողին: Նորէն ու նորէն ցատքեց, դարձեալ չկրցաւ հասնիլ :

Աղուէսին բերնին ջուրերը կը վազէր, սակայն ինչ օգուտ. սարփինան շատ բարձր էր :

Այն ատեն աղուէսն ըսաւ :

—Դեռ խակ են այդ խաղողները, շատ թթու ըլլալու են. չեմ ուզեր ազոխ ուտել: Ու գուշը կախած՝ հեռացաւ գնաց :

ԱՌԱԾ.—Կատուն մսին յնասաւ. ըսաւ՝ հուսած է:

## 102.—ԵԼԱՆՔ ԳՆԱՅԻՆՔ

Ելանք, գնացինք Գալիլիա,  
Գալիլիա ծով մը կար,  
Ծովուն մէց ծառ մը կար,  
Ծառին վրայ բոյն մը կար.  
Բոյնին մէց հաւկիթ մը կար.  
Հաւկիթին մէց ձագ մը կար:  
Ան ձագը անդանակ մոռքեցին,  
Անկրակ եփեցին,  
Ով կերաւ՝ զարմացաւ,  
Ով չկերաւ՝ ձարեցաւ :

## 103.—ԱՄՊ-ՄԱՅՐԻԿԸ

Ամպ-մայրիկը երկու խելօք աղջիկներ ունի և երկու ալ անառակ մանչեր :

Աղջիկներէն մին փոքրիկ քնքուշ էակ մըն է. անունն է Յօղիկ: Սա գարունին ու աշունին ամէն առտու գաղտնաբար կուգայ, պսպղուն մարգարիտներ կը շարէ տերեւներու, ծաղիկներու և խոտերու վրայ :

Ասոր քուրիկը կը կոչուի Զիւնիկ: Աս ալ ճերմակ բամպակ աղջիկ մըն է որ ձը-


մեռը, ցուրտը գալուն պէս՝ մէջտեղ կ'ելլէ, իր սպիտակ քօղը կը փոէ լեռներու, սարերու, դաշտերու և անտառներու վրայ:

Ամպ-մայրիկին մանչերէն մին Անձրեւիկն է որ յաճախ կը ծեծէ մեր պատուհաններն ու տանիքները, ուժգին թափով կ'ինայ գետին, հեղեղներ կը ծեւացնէ ու ամէն ինչ տակն ու վրայ կ'ընէ: Բայց եթէ խելօք ատենին հանդիպի, կը թարմացնէ ծառերն ու բոյսերը, կը զովացնէ շորցած հողը:

Ամէնէն շարն է ասոր եղբայրը որ կը կոչուի կարկուտիկը Սա խենդ Փոթորիկին հետ ընկերացած՝ կուգայ շատ անգամ, կը կոտրէ, կը թափէ, կը ջարդէ, կը փշրէ ինչ որ առջեւը հանդիպի, ապակի, ծառ, ճիւղ, բոյս, արտ և ուրիշ բաներ.

Ամպ-մայրիկը յաճախ կը սրգողի իր անտառակ մանչերուն, Անձրեւիկին ու Կարկուտիկին, իրենց այս շարութեանցը համար, և ահռելի որոտումներով, փայլատակումներով կը սաստէ զիրենք, բայց անոնք չեն խելօքնար, ու կը շարունակեն իրենց շարութիւնները:

— Ի՞նչ կը պատահի շատ անգամ անձրեւին ու կարկուտին հետ միասին:



#### 104. — ԾԻԱԾԱՆՔ

Անձրեւին ետք ամպերն սկսան ցըռուիլ: Անոնց տակէն Արեւը գուրս հանեց իր պայծառ գէմքը և երկինքի կամարին վրայ ձգեց իր գոյնզգոյն, նաշխուն Ծիրանի Գօտին: Ծիածանն էր որ ծագեր էր:

Անիկա այնչափ գեղեցիկ, այնչափ շքեղ էր որ ամէն մարդ կանգնած՝ կը դիտէր զայն հիացումով: Ծիածանը գոռողացաւ և սկսաւ պարծենալ թէ ինք Արեւէն աւելի աղուորիկ է:

Արեւն ալ ըսաւ:

— Իրաւ է թէ գեղեցիկ ես, բայց միթէ առանց ինծի կընամա ըլլալ. չէ որ ինձմէ ելած ես:

Ծիածանը չուզեց հասկնալ և Արեւին  
վրայ ծիծաղեցաւ :

Արեւը բարկացաւ, մտաւ ամպերուն  
տակ, և Ծիածանն ալ անհետ եղաւ :

—Ե՞րբ կը ծագի Ծիածանը, առանց Արեւի ծիածան  
կը ծագի :



### 105. —ԳՈՒԹԱՆԵՐԳ

Առաւօտու աստղն երեւաց,  
Բարիլուսու դռներն են բաց .  
Բացուի բարով լուս-աղօթրան,  
Հանեմ գութան, լծեմ սարուած :  
Դէհ, վեր կացէք, ժիր զոմշուկներ,  
Գութան երթանք, արտ վարելու .  
Մաճկալ բարեւ տուաւ Աստուն,  
Գութան հասաւ արտին գլուխ .

Մաժկալն ասաց. «Եա՛ Տէր Աստուած»:  
Խոփն օձի պէս առաջ սողաց :

ԱՌԱԾ. Մշա'կ, ֆիչ խօսէ, շա's ակօսէ:

### 106.—ԱԻԱԳ. ՄԿՆԻԿՆ ՈՒ ԱՔԼՈՐ ԱՂԱՆ

Աւագ մկնիկ խաթունն ու աքլոր աղան  
ամուսնացան իրարու հետ : Օր մը աքլորը  
դուրս ելաւ կեր ճարելու : Մկնիկն ալ թո-  
նիրը վառեց որ բան մը եփէ : Մէյ մըն ալ  
թոնիրն ինկաւ բռնկեցաւ, ու ճզրը ճզրը  
այրեցաւ :

Իրիկուան աքլորը գարձաւ տուն . Նա-  
յիցաւ որ մուկը թոնիրն ինկեր, այրեր է :  
Լացաւ, լացաւ, գլուխին մոխիր ցանեց ու  
նստաւ :

Հեռուէն ճնճղուկ մը տեսաւ աքլորը ու  
հարցուց :

—Աքլորիկ. ինչու եղար մոխրաչփիկ :  
Աքլորն ալ ըստւ :  
—Ա՛խ, աքլոր մոխրաչփիկ, աւագ մկնի-  
կըն ինկեր է թոնիր, եղեր է չստիկ-մստիկ :

Աս որ լսեց ճնճղուկը թափեց փետուր ները և ծառի մը կատարը նստաւ։ Ծառը հարցուց։

— Ճնճղուղիկ, ինչո՞ւ եղար թեւաթփիկ։  
Ճնճղուկն ըստ։

— Ախ, ճնճղուղիկ թեւաթփիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Ծառին ճիւղերը կոտրտեցան, թափեցան գետինը քարին վրայ, քարը հարցուց։

— Ծառիկ, ինչո՞ւ եղար ճղակոտոր։  
Ծառն ալ ըստ։

— Ախ, ծառիկ ճղակոտոր, ճնճղուղիկ թեւաթփիկ. աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Քաջը զլորեցաւ, գնաց ընկաւ վտակը։  
Վտակը հարցուց։

— Քարիկ, ինչո՞ւ եղար զլոր-մլոր։

Քարն ալ ըստ։

— Ախ, քարիկ զլոր մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճղուղիկ թեւաթփիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Վտակին ջուրն իսկոյն արիւնի փոխուեցաւ։

Լուսանման աղջիկ մը կուժն ուսին՝ եկաւ վտակէն ջուր առնելու, Երբոր տեսաւ որ ջուրն արիւնի փոխուեր է, հարցուց։

— Վտակիկ, ինչո՞ւ եղար արիւն-մարիւն։  
Վտակն ալ ըստ։

— Ախ, վտակիկ արիւն-մարիւն, քարիկ զլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճղուղիկ թեւաթփիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Աղջիկը կուժը նետեց, կոտրտեց ու տուն դարձաւ։ Տառը հարցուց։

— Աղջիկ, ինչո՞ւ կուժն ըրիր կտոր կտոր։  
Աղջիկն ալ ըստ։

— Ախ, տառիկ, աղջիկը կուժ կոտոր-կտոր, վտակիկ արիւն-մարիւն, քարիկ զլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճղուղիկ թեւաթրփիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Տառը ցաւէն մօրուքը ածիլեց ու նըստաւ դուռը։ Անդիէն մշակ մը անցաւ լուծքը ուսին, տեսաւ տառը ու հարցուց։

— Տատիկ, ինչու եղար մօրուք-ածելուկ:  
Տատն ալ ըստւ:

— Ա՛խ, տատիկ մօրուք-ածելուկ, աղջիկը  
կուժ կտոր-կտոր, վտակիկ արիւն-մարիւն,  
քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճու-  
ղիկ թեւաթփիկ, աքլորիկ մոխրաշփիկ, ա-  
ւագ մինիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-  
մստիկ:

Մշակը կոտրեց լուծքը ու նստաւ, լա-  
ցաւ: Ամէն լսողները մեծ սուգ ըրին, ինչու,  
ի՞նչ է պատահեր:

Մուկն է մեռեր:



107.—ԱՊՈՒՇԻՆ ՀԵՔԵԱԹԸ

Ժամանակին գեղի մը մէջ երկու եղ-  
բայրներ կային, մէկը խելօք, մէկալը՝ ա-  
պուշ:

Ապուշ եղբայրը ամէն տեսակ խենդու-  
թիւններ կ'ընէր տունին մէջ: Խելօքը համ-  
բերութեամբ կը տանէր անոր բոլոր ըրած-  
ներուն:

Օր մը ապուշին խելքին փչեց որ եղբօր-  
մէն զատուի: Խելօքը ուզեց հակառակիլ,  
բայց խենդին նվ կընայ հակառակիլ:

Ապուշը՝ բաժնելու համար իրենց ու-  
նեցածը, խոշոր բիր մը առաւ ձեռքը, մը-  
տաւ ախոռ և սկսաւ բոլոր կենդանիներուն  
զարնել: Անասունները վեր վեր ցատկեցին  
և լեղապատառ դուրս փախան ախոռէն, մի-  
նակ ծեր կով մը մնաց որ տեղէն չէր կընար  
շարժիլ:

Ապուշը փախչող կենդանիները եղբօրը  
բաժին թողուց, և ինք իրեն բաժին առնե-

լով ծեր կովը, տունէն զուրս ելաւ։ Գոհու-  
նակ սրտով՝ կովը խառնեց առջեւը և սկսաւ  
գեղը պտտիլ կովը ծախելու համար։ Բայց  
ծեր կովը նվ կը գնէ։

Դուրս ելաւ գեղէն, ինկաւ յեռ, սար,  
քալեց անդադար՝ կովը մշտելով և երթեմն ալ  
պոռալով։

— Ծախու կով, ծախու կով, նվ կ'առ-  
նէ . . .

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ որ յո-  
պոպիկ մը իր բոյնին մէջ նստեր՝ կը կանչէ։

— Իպիպիկ, կուկուկնւկ . . .

Ապուշը ուրախութիւնը թռչունին մօտ  
գնաց և հարցուց։

— Դուն կ'առնե՞ս կովս։

— Իպիպիկ, ձանեց թռչունը։

— Քանի՞ ոսկի կուտաս։

— Կուկուկնւկ . . .

— Ի՞նչ եօթը ոսկի։

— Իպիպիկ . . .

— Քիչ մը աւելի չե՞ս տար։

— Կուկուկնւկ . . .

— Առ, եօթը ոսկի թնդ ըլլայ, տուր  
փարան։

— Իպիպիկ . . .

— Հիմա փարա չունի՞ս :

— Կուկուկնւկ . . .

— Տասնըհինգ օրէն կուտամ :

— Իպիպիկ . . .

— Թնդ ըլլայ, տասնըհինգ օրէն կուգամ,  
փարան կ'առնեմ, ըստ ապուշը, և կովը  
հոն ձգելով՝ գեղ դարձաւ։

Խելօք եղբայրը երբոր լսեց պատահածը,  
շատ նեղացաւ, բայց ինչ կրնար ընել։

Ժամանակը լրանալուն՝ ապուշը գնաց  
հոն՝ ուր ձգած էր կովը և տեսաւ որ կո-  
վուն միայն ոսկորներն են մնացեր, և անոնց  
վրայ հազար-համար թռչուններ թառեր՝ կը  
կտցեն շարունակ։

Քիչ մը անդին ալ յոպոպիկը նստած՝  
նորէն կը կանչէ

— Իպիպիկ, կուկուկնւկ . . .

— Ի՞նչ է այս, հարցուց ապուշը յոպո-  
պին, մատամղ ըրիր կովը։

— Իպիպիկ . . .

— Տէրը ընդունելի ընէ. իմ փարաս  
տուր որ երթամ։

— Կուկուկնեկ . . . .  
— Նորէն փարա չունիս, ութ օրէն կու  
տան :

— Իպիպիպէկ . . . .  
— Աղէկ, ութ օրէն կուգամ, բայց եթէ  
նորէն չտաս փարաս, գլուխդ կը ջախջախեմ,  
սպառնաց ապուշը, և նորէն գեղ դարձաւ :

Ութ օր վերջ՝ դարձեալ գնաց յոպոպին  
և դրամն ուզեց : Յոպոպը նորէն կոնչեց իր  
սովորական իպիպիկ-կուկուկուկը :

— Վայ անպիտան, կ'երեւի թէ դուն  
իմ փարաս պիտի ուտես, պոռաց ապուշը  
բարկութեամբ, և ձեռքին բրիչովը ուժգին  
հարուած մը իջեցուց վերէն վար,

Յոպոպը՝ թը՛ռ, թուաւ, և հարուածը  
հանդիպեցաւ քարի կտորի մը որ փշրուե-  
ցաւ ու անոր տակէն ոսկիներու տարափ  
մը՝ վազեց գետին :

— Տես, տես, այսշափ փարային վրայ  
նստեր՝ զիս կը խաղցընէ, չի տար գրամս,  
ըսաւ ապուշը, և գետինը թափած ոսկինե-  
րէն իր կովուն գինը՝ միայն եօթը ոսկի առ-  
նելով, դարձաւ գեղը :

Խելօք եղբայրը ապուշին ձեռքը հին,  
խոշոր, թանկագին ոսկիներ տեսնելով՝ դար-  
մացաւ, և հարցափորձելով՝ հասկցաւ եղե-  
լութիւնը :

Երկու եղբայր միասին նորէն գնացին  
լեռը և հասկցան որ այստեղ հնուց թաղ-  
ուած գանձ մը կայ եղեր, և ապուշին բը-  
րիչը անոր հանդիպելով՝ մէջտեղ ելեր է  
գանձը : Ժողվեցին գետինը ցանուած կար-  
մրուկ ոսկիները, տոպրակներով բերին գեղը  
և աղուոր, աղուոր վայելելով՝ հանգիստ  
կեանք մը վարեցին :

ԱՌԱԾ. Խենդին հացը, խելօյին փորը:



### 108.—ԳԻՒՂԻՆ ԱՌԱԽՈՑՔ

Ախ, ես որքան կը սիրեմ զիւղին առա.  
ւոտը, լոյսը կը բացուի ու աքաղաղը իր  
թառին վրայէն կը պոռայ. կու-կու-լիկ-կու:  
իր ձայնին պատասխան կու տան մօտիկ  
զիւղի իր ընկերները :

Անուշ հովը. խաղալէն խաղալէն կ'անց-  
նի, երերցնելով ծառերուն տերեւները :  
Թոնիրները կը ծխան ու կապոյտ մուխը  
սիւն սիւն կը բարձրանայ օդին մէջ :

Կը լսուի ահա ժամուն զանգակը,  
թիքը-թաք, թիքը-թաք, թիքը-թաք : Աղջիկ-  
ները, կուժը իրենց ուսը առած, աղբիւրը  
ջուրի կ'երթան :

Կովերը կը բառաչեն, ոչխարները կը  
մայեն, գոմէշները կը մլան, կը լծուին ու  
կը քաշեն սայլը :

Սայլին վրայ նստած է գեղացի մանու-

կը, կը յօրանջէ, և իր երկայն մահակով կը  
խթէ գոմէշներուն կողը՝ պօռալով :  
— Հօ, հօ սեւուկ, հօ, պօզօ, ոտք  
վերցուր :

Հնձաւորները, մանգաղը անցուցած  
իրենց վզին, լուռ կը քալեն. խումբ խումբ,  
դէպի արտերը . կ'աճապարեն, որպէսզի  
տաքը չսկսած, առտուան զով օդին, քաղեն  
իրենց քաղը և խուրձ դիզեն մինչեւ կէսօր:

Ահա արեւը ոսկիի պէս կը ցաթի՝ եր-  
կայն բարտիներու գագաթին վրայ, և կա-  
մաց կամաց սողալով վար կ'իջնէ . կը հա-  
ւաքուի նախիրն ալ, և հովիւր կը քշէ կո-  
վերն ու ոչխարները՝ դէպի արօտավայր :

Կամաց կամաց զիւղը կ'ամայանայ,  
տունը կը մնան միայն պառաւներն ու  
տանտիկինները :

Ի՞նչ գեղեցիկ է ամառուան առաւօտը  
գեղին մէջ :

109.—ԿԱՐԹԸ ԵՒ ԶԿՆԻԿՆԵՐԸ

Զկնորսները կարթը իջեցուցեր էին  
ծովս ի վար. ասեղին ծալրն ալ աղուորիկ  
որդ մը դրեր էին :

Զկնիկները՝ որդը տեսան թէ չէ, բե  
րաննին բացին և վաղեցին վրան. Ամենքն  
ալ կը նայէին որ առաջ հասնին և որդը ի-  
րենք լափեն :

Քայց մայր ձուկը կեցուց զանոնք :

Գոցեցէք բերաննիդ, բսաւ անոնց, նախ  
հասկցէք թէ թնչ է և վերջը կերէք :

—Մայր, ըսին ձկնիկները, աղուորիկ  
որդ մըն է, բարի մարդիկ վար իջեցուցեր  
են որ ուտենք :

Մայր ձուկը խնդաց իր պարզամիտ  
ձագերուն վրայ, և ըսաւ :

—Տղաքս, մարդիկ ձեզ սիրելնուն հա-  
մար չէ որ վար իջեցուցեր են այս որդը :  
Եթէ ուշադրութեամբ նայիք՝ պիտի տես-  
նէք որ որդը ասեղի մը անցուած է : Կըլ-

լելնուդ պէս, ասեղը բերաննիդ պիտի մտնէ  
և ահա ձեզ վեր պիտի քաշեն :

—Բայց մեզ թնչ պիտի ընեն, մայր :

—Պիտի ստկեն, տապակին մէջ պիտի  
դնեն և իւղով պիտի տապկեն :

—Ու տապկելէ վերջը . . .

—Տապկելէ վերջ ալ փառաւոր մը պի-  
տի ուտեն. ձեր փուշերն ալ փիսիկին պի-  
տի տան որ ան ալ խնջոյքէն բաժին ու-  
նենայ :

Այս որ լսեցին, ձկնիկները շուտ շուտ  
փախան որդին քովէն :


—Ինչու կը փախիք, եկէք, դեռ ըսելիք  
ունիմ. Այս որդին մէկ կտորը կրնաք ու-  
տել : Մի դպչիք այն մասին որ ասեղին  
պլուած է, բայց անկէ վար երկարող մասը  
զգուշութեամբ կրնաք փրցնել և ուտել :

Ցետոյ, մայր ձուկը թեւովք ցոյց տուաւ  
ուտելիք մասը : Զկնիկները փրցուցին այդ  
կտորը և աղուոր մը կերան :

**Զենորսները դեռ կ'սպասեն որ ձուկ  
բռնեն :**

Կարթը միշտ լեցուն վար կ'իջնէ և պա-  
րապ վեր կ'ելլէ :

**Զկնիկները ազատեցան, որովհետեւ  
հնազանդեցան իրենց մօրը :**



## ՑԱՆԿ

	Եջ
1. Իմ գիրքս (ոտանաւոր) հետեւողութիւն Յ. Գ.	3
2. Օրուան պահերն ու ժամերը	4
3. Աքաղաղ (ոտանաւոր) Գամառ Քարիպա	5
4. Շնորհիկն ու չնիկը	6
5. Փոքրիկ դպրոցականը (ոտանաւոր) Յ. Գ.	7
6. Զբաղեալ մանուկներ	7
7. Մանկիկը թոշնիկին (ոտանաւոր) Ա. Ն. Խ.	8
8. Մոյլ Խորէնը	9
9. Մոյլ ազնակը (ոտանաւոր) հետեւողութիւն	10
10. Նաշխուն թիթեանիկը Յ. Գ.	10
11. Բարի Անահիտը	11
12. Գոյները (ոտանաւոր) Յ. Գ.	12
13. Շարթուան օրերը Յ. Գ.	12
14. Արփիկին պուպրիկը (ոտանաւոր) հետեւողը, Յ. Գ.	13
15. Հարցում մը. Ժողովրդական	14
16. Զիակ, ձիակ (ոտանաւոր) Ժողովրդական	15
17. Ակնոցը, հետեւողութիւն	15
18. Մզ, ոզ... (ոտանաւոր) հետեւողութիւն Յ. Գ.	16
19. Խելօք գլուխը	17
20. Հայրիկը (ոտանաւոր) հետեւողութիւն Յ. Գ.	18
21. Դրիգորիկն ու կովերը, թարգմանութիւն	19
22. Հրեշտակն ու մանկիկը (ոտանաւոր) Պ. Մինասեան	20
23. Արձագանգը, հետեւողութիւն	20
24. Օրօրերգ (ոտանաւոր) Ժողովրդական	21
25. Ճնճղուկին բոյնը	22
26. Մայրիկը	23
27. Անուններ (ոտանաւոր) Յ. Գ.	24
28. Փոքրիկ Սուրէնը, հետեւողութիւն	25
29. Փիսիկ, փիսիկ (ոտանաւոր) հետեւող.	26

30.	Գէշ սովորութիւն, «Ծաղիկ» մնկ. հանդէս	27
31.	Մարմիթ անդամները (ոտանաւոր) հնեւելող. Յ. Գ.	27
32.	Վերէն ու վարէն. հնեւելողութիւն	29
33.	Արտուաիկ (ոտանաւոր) ժողովրդ.	30
34.	Կռուրտող քոյրեր	31
35.	Սագիկ, սագիկ (ոտանաւոր)	32
36.	Նորածին Պետիկը. ժողովրդ. Յ. Գ.	33
37.	Աստղիկին երազը թրգմ.	34
38.	Պառաւին հաւը	35
39.	Աւիկիներ (ոտանաւոր) հնեւելող.	35
40.	Թափթփած Յակորը	36
41.	Կոկիկ Նուարդը (ոտանաւոր) հնեւելող. Յ. Գ.	37
42.	Քաջ եղջերուն	38
43.	Մեր տան ետեւ (ոտանաւոր) ժողովրդ.	39
44.	Անկեղծութիւն. քարզմ.	39
45.	Պատիկ չարածձին (ոտանաւոր)	40
46.	Պարտէզին մէջ հնեւելող.	41
47.	Պուպիատիկինը (ոտանաւոր) ժողովրդ.	42
48.	Առիւծն ու գորտը	43
49.	Բուսիկը (ոտանաւոր)	43
50.	Աւատան ճառագայթները. հնեւելող.	44
51.	Մանուչակ (ոտանաւոր) Գողոխնեան	47
52.	Մանուկը արե. ին. հնեւելող.	48
53.	Գիշեր բարի (ոտանաւոր) հնեւելող. Յ. Գ.	49
54.	Ճշմարախոս Տիգրանը, «Ծաղին» մնկ. հանդէս	50
55.	Լնտանի կենդամները (ոտանաւոր) հնեւելող. Յ. Գ.	51
56.	Երկու մուկեր	52
57.	Պաղասէր տղան (ոտանաւոր)	53
58.	Լալկան Մինասը. թրգմ.	54
59.	Մեր ժամը (ոտանաւոր)	55
60.	Երկու խաղընկերներ	56

61.	Թռուցիկը (ոտանաւոր) Սաական Վրդպ.	57
62.	Ազռաւին խրատը	58
63.	Կաղանդ պապան (ոտանաւոր)	59
64.	Աղուէսին ուխտը. ժողովրդ.	60
65.	Նոր տարին ու աղքատները (ոտանաւոր) «Ծաղիկ»	61
66.	Շնիկն ու փիսիկը, թրգմ.	62
67.	Խելօք Դաւիթին կովը. ժողովրդ.	63
68.	Զատիկ (ոտանաւոր)	64
69.	Անհոգ տղան	64
70.	Մեղու (ոտանաւոր) Գ. Գարիպա	65
71.	Յաջող որսորդութիւն, ժողովրդ. Յ. Գ.	66
72.	Չորս եղանակ (ոտանաւոր) Գ. Գարիպա	68
73.	Օձն ու գեղացին	69
74.	Տարուան Ամիսները (ոտանաւոր) Գ. Գարիպա	70
75.	Արեւ Քուրիկն ու լուսին աղբարիկը, ժողովրդ.	71
76.	Ծառիկ (ոտանաւոր) Միինաց	72
77.	Խնձորենին այցելուները, հերեւող.	73
78.	Գարուն (ոտանաւոր) «Ծաղիկ» մնկ. հանդէս	74
79.	Անտառին մէջ. հնեւելող.	75
80.	Առուակ (ոտանաւոր) Զոկ	76
81.	Աքլորին զրայցը. ժողովրդ. «Բիւրակն» հանդէս	77
82.	Երեք ձուկերը. թրգմ.	79
83.	Նաւը (ոտանաւոր)	81
84.	Չարաձճի քասին, հնեւելող.	81
85.	Երկրին չորս կողմերը (ոտանաւոր) Յ. Գ.	83
86.	Պապուկին հանելուկը, ժողովրդ.	84
87.	Բաղիկը (ոտանաւոր) Գ. Գարիպա	86
88.	Մաման ու անձեղը. ժողովրդ. «Բիւրակն»	87
89.	Տօնի օրեր (ոտանաւոր) Էմմ. Ֆնն.	89
90.	Շուտասելուկ. ժողովրդ.	90
91.	Ծուզակը. թրգմ.	91

	է
92. Կենդանիներու վէճը . հետեւող.	92
93. Լուսին պապուկ (ռաանաւոր) Յ Գ ,	94
94. Մանուկները դաշտին մէջ . հետեւող.	96
95. Զազացքը (ռաանաւոր)	98
96. Վագրն ու կատուն , ժողովրդ.	99
97. Վիճակին երգը (ռաանաւոր) ժողովրդ.	101
98. Գայլն ու մօր վրէժը , ժողովրդ.	102
99. Մանուկն ու ջուրը (ռաանաւոր) ժողովրդ. Յ . Գ . 103	
100. Ռսկին ու երկաթին վէճը	104
101. Աղուէսն ու խազողը	106
102. Ելանք գնացինք . ժողովրդ.	107
103. Ամպ. Մայրիկը , հետեւող.	107
104. Ծիածանը	109
105. Գութաներգ (ռաանաւոր) ժողովրդ.	110
106. Աւագ մկնիկ ու աքլոր աղան ժողովրդ. Բիւրկ.	111
107. Ապուչին հէքեաթը	115
108. Գիւղին առաւօտը (ռաանաւոր) ժողովրդ.	120
109. Կարթը և ձկնրկները	122

### ՀԱՆԵԼՈՒԿԻՆԵՐ

Թիւ	1	.	.	.	Աքաղաղ
»	2	.	.	.	Շարթուան եօթն օրերը
»	3	.	.	.	Բերան , ականջ , աչք
»	4	.	.	.	Հաւկիթ
»	5	.	.	.	Եռւշ
»	6	.	.	.	Օձ
»	7	.	.	.	Տարուան 12 ամիսները
»	8	.	.	.	Արեւ
»	9	.	.	.	Լուսին
»	10	.	.	.	Ազօրիք